Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Կ. Հ. ՂԱՇՐԱՄԱՆՅԱՆ, Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2008

63.3(2Հ) + 66.3(2Հ)
Դ. 28

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Կ. Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

41.553
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հիմնադրամ
ФОНД
FOUND
01533651

ԵՐԵՎԱՆ
«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
2008

ՀՏԴ 941(479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Ղ 287

Հրատարակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի հովանավորությամբ

Ղահրամանյան Կ. Հ. (պատմ. գիտ. դոկտոր)
Ղ 287 Ղազիյան Ա. Ս. (բան. գիտ. թեկն.):
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն.
Պետականության ակունքները.-
Եր. «Վան Արյան», 2008.- 72 էջ

Գրքում ցույց է տրված, որ Արցախն ունեցել է որոշակի ինքնուրույն պետականություն դեռևս հին հայկական միասնական թագավորության մեջ՝ ինչպես որ երկրի մյուս նահանգները: Պետականության ձևերը փոխվել են հետագա դարերում՝ փոփոխված պայմաններին համապատասխան, սակայն բոլոր ժամանակներում այդ հողի վրա կյանքը կազմակերպվել ու կարգավորվել է սեփական ազգային իշխանությունների կողմից: Մեր ժամանակներում ձևավորված հանրապետությունը՝ ԼՂՀ-ը, հիմնվում է դարավոր ավանդույթների և մշակված իրավական գիտակցության վրա, որը նրա կենսունակության և զարգացման երաշխիք է:

Գիրքը ուղղված է ընթերցող լայն հասարակությանը:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

© Ղահրամանյան Կ., 2008 թ.

ISBN 978-9939-812-12-0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի հանրապետության կազմավորումն ու զարգացումը պատմական խոր արմատներ ունի և ժողովրդավարության հաստատման բարդ ու երկարատև մի գործընթաց է: Այդ գործընթացը լեռնաշխարհում հասարակական կյանքի զարգացման օրինաչափություն է, որի մասին հստակ պատկերացում ունենալը կարող է օգտակար լինել մի կողմից՝ ԼՂՀ պետականության հետագա ամրապնդման համար, մյուս կողմից, կարող է օգնել շահագրգիռ քաղաքական ուժերին՝ գտնելու Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման, տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման արդյունավետ ուղին:

Արցախ աշխարհը վերջին շուրջ երեք հարյուր տարիների ընթացքում գտնվում է տարածաշրջանի ռազմաքաղաքական ակտիվ գործընթացների կիզակետում: Առավել ևս վերջին տասնամյակների ընթացքում արցախյան հիմնախնդիրը համակողմանի քննության է ենթարկվում պատմաբանների ու քաղաքագետների, իրավագետների ու լրագրողների, հասարակական այլևայլ, հատկապես՝ քաղաքական ուժերի կողմից: Շատերն են զարմանում, թե երկրամասն ինչպես կարողացավ պաշտպանել իր ինքնորոշման իրավունքը, պարտադրված պատերազմում ինչպես կարողացավ հաղթել բազմակիորեն գերազանցող հակառակորդին, ստեղծել տարածաշրջանի թերևս ամենամարտունակ բանակներից մեկը: Եվ դրանց զուգահեռ, սկսած ամենածանր տարիներից, ԼՂՀ-ում արմատավորվում են ժողովրդավարության

սկզբունքներ, ձևավորվել է արևմտյան չափանիշներին համապատասխանող հանրապետություն: Այդ ամենն, ինչ խոսք, չէր կարող ստեղծվել պատմական կարճ ժամանակահատվածում՝ նույնիսկ ամենահզոր պետությունների օգնությամբ: Դրանում համոզում են Աֆղանստանում, Իրաքում և այլուր խոշոր պետությունների (առաջին հերթին ԱՄՆ -ի) և միջազգային կառույցների ապարդյուն փորձերը ժողովրդավարություն կամ գոնե բավարար խաղաղություն հաստատելու ուղղությամբ: ԼՂՀ -ն երկրամասում պետականության ձևավորման ու զարգացման պատմական երկարարատև գործընթացի օբյեկտիվ արդյունքն է:

1. ԱՐԵՎԵԼԻՑ ԱՇԽԱՐՀԻՑ ՄԻՆՉԵՎ ԼՂՀ

Բուն խնդրին անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում նախ պարզել երկրամասի անվան հետ կապված հարցերը: Այդ անվանումը դարերի ընթացքում քանիցս փոփոխության է ենթարկվել, իսկ 1920 -ական թթ. կեսերից սկսած նպատակաուղղված կերպով կեղծվում ու խեղաթյուրվում է՝ ելնելով քաղաքական որոշակի շահերից: Ադրբեջանական իշխանություններն ի սկզբանե կարևոր նշանակություն են տվել ու տալիս են անվանումներին: Հաճախ արհեստածին անվանումներով անորոշություն են ստեղծում, երբեմն էլ գիտակցաբար անվանումից դուրս են թողնում ամենաէական բառերը: Տարիների ընթացքում ոչ միայն միջազգային շրջաններում, այլ նույնիսկ հայ իրականության մեջ ստեղծվել է թյուր պատկերացում Արցախ-Ղարաբաղի մասին: Իսկ դա իր հերթին բացասական ազդեցություն է ունենում արցախյան հիմնախնդիրը ճիշտ պատկերացնելու, պատերազմի ընթացքում ձևավորված իրողությունները ճիշտ գնահատելու վրա, ինչպես նաև խոչընդոտում է հիմնախնդրի կարգավորման արդյունավետ ուղի գտնելուն:

Արցախը եղել է պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկը: Նրանից դեպի հյուսիս Կուր գետի հոսանքով գտնվում էր Ուտիքը: Կուրը այդտեղ Հայաստանի սահմանն էր, որով նա բաժանվում էր աղվանական ցեղերից: Գետից դեպի հյուսիս, ձախափնյա մասում, հայկական միայն մեկ գավառ կար՝ Կամբեճանը: Այդ են վկայում հին հունական ու հռոմեական աղբյուրները, հետագա պատմիչներն ու պատմաբանները: Արցախ նահանգի աշխարհագրական դիրքն այդպես են ընկալել ոչ միայն հայ, այլև օտարազգի պատմաբանները:

Հարցը քաղաքական ընդգծված բովանդակություն է ստացել ու սկսել խեղաթյուրումների ենթարկվել միայն Ադրբեջան անունով պետության ստեղծվելուց հետո,

1920 -ական թվականներից: Քանի որ այդ հարցը վաղուց գիտականորեն հիմնավորված է, այստեղ դրան հանգամանորեն անդրադառնալու հարկ չենք տեսնում, որովհետև պատմական անցյալը ներկա իրողություններին հարմարեցնելու ուղղությամբ կեղծարարությունը գիտության հետ կապ չունի: Բավարարվենք միայն հիշեցնելով, որ Հարավային Կովկասում ռուսական տիրապետության հաստատումից հետո ցարական իշխանություններն ուսումնասիրել են երկրամասի անցյալը և համոզվել, որ Կուր գետը սահման է հանդիսանում Հայաստանի և Աղվանք՝ Ալբանիա անունով հայտնի երկրի միջև: Այդպես է նշված Ալեքսանդր 1 -ին կայսեր կարգադրությամբ լույս տեսած ուսումնասիրության մեջ[1]: Ռուս հետազոտող Նիկոլայ Ֆրոլովսկին դեռևս 1830 -ական թթ. գրել է, որ «այդ տարածքների հնագույն բնակիչները հայերն են, իսկ թաթարները (խոսքը ներկայումս «ադրբեջանցի» համարվողների մասին է) եկվորներ են Կասպից ծովի մյուս կողմից»[2]: Նույնիսկ ներկայիս Ադրբեջանի այսպես կոչված պատմագիտության նախահայրերից մեկը հանդիսացող Աբաս-կուլի-Աղա Բաքիխանովը՝ ուսումնասիրելով հունահռոմեական աղբյուրները, համոզվել է, որ «Կուր գետի աջ ափը, մինչև Արաքսի հետ միախառնվելու տեղը, կազմել է Հայաստանի սահմանը[3]: Ուշագրավ է, որ նրա գիրքը լույս է տեսել հենց նորաստեղծ Ադրբեջանում՝ 1926 թ.:

1920 -ական թթ. վերջերից, հատկապես 30 -ականներից սկսած այդ հանրապետությունում սկսում են իրենց սահմաններն ընդգրկող ամբողջ տարածքը համարել իրենց պատմական հայրենիքը, այդ հողի վրա անցյալում ստեղծված արժեքները՝ ադրբեջանական, իսկ հնագույն բնակչությունը՝ ադրբեջանցիների նախնիներ կամ պարզապես ադրբեջանցիներ: Եվ դա այն դեպքում, երբ նույնիսկ 1930 թ. Մոսկվայում լույս տեսած «Քաղաքական բառարանը» թվարկում է այդ հանրապետության տարածքի ազգաբնակչությունը. պարսկական՝ Ատրպատականի (азербайджанские) թուրքեր, թաթարներ, թաթեր, ռուսներ, հայեր և այլն: Այսինքն՝ «ադրբեջանցի» էթնոս գոյություն չի ունեցել:

«Աղվանք-Ալբանիա» թարգմանվում է որպես լեռների երկիր, ինչպես որ այժմ կոչվում է՝ Դաղստան: Այն ընդգրկում է տասնյակ մանր ցեղերի ընդհանուր տարածքը: Մեսրոպ Մաշտոցի ժամանակաշրջանում հայկական աղբյուրները հիշատակում էին 26 ցեղ: Այդ տարածքի մի մասը 1918 - 1920 թթ. ներառվեց նորահայտ Ադրբեջանի, իսկ հիմնական մասը մնում էր Ռուսաստանի կազմի մեջ: Տարիների ընթացքում այդ նորաստեղծ պետության՝ Ադրբեջանի իշխանություններն սկսեցին իրենց համար պատմական անցյալ հորինել՝ սեփականացնելով երբեմնի աղվանական ցեղերի պատմությունը և կողոպտելով Դաղստանի ժողովուրդների անցյալը: Դրան մեծապես նպաստում էր խորհրդային համահարթեցման ու հավասարեցման քաղաքականությունը: Պարզապես զավեշտական, եթե ոչ ողբերգական է այն, որ ադրբեջանական պատմագրությունը տասնամյակներ շարունակ ներկայացնում է ադրբեջանցիներին՝ իբրև աղվանների հետնորդներ, Արցախ-Ղարաբաղի ու Նախիջևանի հնամյա հայկական բոլոր եկեղեցիները, խաչքարերը, նույնիսկ պատմական դեմքերը (ինչպես օրինակ՝ Մովսես Կաղանկատվացուն) համարում է աղվանական, իրենց էլ՝ որպես դրանց օրինական ժառանգորդներ, սակայն նույն այդ Ադրբեջանի իշխանությունների կողմից ծրագրված ձևով ավերվում, ոչնչացվում են այդ եկեղեցիներն ու խաչքարերը: Բանը հասավ նրան, որ քաղաքակիրթ կոչված աշխարհի աչքի առջև 2006 թ. բուլդոզերներով ոչնչացվեցին Ջուղայի խաչքարերը...

---

[1] Описание Кавказа с кратким историческим и статистическим описанием Грузии, С-Пб, 1805, с.28.

[2] Обозрение Российских владений за Кавказом, ч.II, С-Пб., 1836, с.439.

[3] Абас-Кули-Ага Бакиханов, Гюлистан-Ирам, Баку, 1926, с.8.

Հայաստանի հյուսիս-արևելյան երկու նահանգների՝ Արցախի և Ուտիքի քաղաքական ճակատագրի ընթացքը, տնտեսական ու հոգևոր-մշակութային կյանքն այնպես է ընթացել, որ նրանք գրեթե միավորվել են: Ընդհանուր ձևով երկրի այդ մասը կոչվել է Հայոց Արևելից աշխարհ (կողմանք) կամ պարզապես՝ Արևելից աշխարհ: Միասնական հայկական պետության ձևավորման ժամանակ հայոց Վաղարշակ թագավորը, ըստ Մովսես Խորենացու, կուսակալ է նշանակել Հայկ նահապետի տոհմից Սիսակի որդի Առանին[1]: Նրա հետնորդները կոչվել են Առանշահիկներ, երկրամասը երբեմն՝ Առան:

5 -րդ դ. հայոց Արշակունյաց թագավորությունը վերացվեց, Հայաստանի արևելյան նահանգները դարձան Պարսկաստանին ենթակա մարզպանություն: Այն ավելի թուլացնելու նպատակով երկրի հյուսիս-արևելյան շրջաններն էլ՝ Արևելից աշխարհ կոչված Ուտիքն ու Արցախը, միացվեցին պարսկահպատակ Աղվանք կոչվող երկրի հետ, դարձնելով մեկ այլ մարզ՝ Աղվանք անունով: Այս երկրորդ մարզը բաղկացած էր երկու անհամատեղելի հատվածներից: Հյուսիսում բազմալեզու ցեղեր էին, իրենց առանձին-առանձին առաջնորդներով: Նրանց միավորող գրեթե ոչ մի ընդհանրություն չկար, նրանք երբևէ մեկ միասնություն չէին կազմել ու այդպես էլ շարունակում էին մնալ միմյանցից տարանջատված: Մարզի մյուս մասը՝ հայկականը, միասնական էր իր տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքով, ընդհանուր անցյալով:

Այդ ժամանակներից սկսած Աղվանք անվանումը տարածվեց նաև Հայոց Արևելից աշխարհի վրա: Հայ եկեղեցու այդ թեմն էլ, բնականաբար կոչվեց այդ անունով: Սակայն բոլոր հետազոտողները Աղվանք-Ալբանիա երկիրը՝ իր բազմազան ցեղերով, տարբերել են հայկական Աղվանքից: Ա. Ա. Ցագարելին, օրինակ, Կուր գետից հյուսիս գտնվող

[1] «Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860, էջ 113:

երկիրն անվանում է «բուն Աղվանք (Ալբանիա)», իսկ գետից հարավ գտնվողը՝ «Հայկական Աղվանք»[1]:

Հենց այդ երկրամասի հեռավոր անցյալից մինչև 10 -րդ դ. իրողություններն են ամփոփվում հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Աղվանից աշխարհի պատմության» մեջ: Ուշագրավ է, որ ուսումնասիրելով այդ գիրքը, ռուս հետազոտող Ս. Վ. Յուշկովը գրել է, որ «Կաղանկատվացու նկարագրած Աղվանքը գտնվում է հին Հայաստանի և ոչ թե հին Ալբանիայի տարածքում»[2]: Բուն Աղվանքի մասին պարունակած նյութերը հատվածաբար անփոփոխ քաղված են 5 - 7 -րդ դարերի հայ պատմիչների երկերից: Հետաքրքիր է, որ անդրկուրյան Աղվանք երկրի ցեղերին պատմիչը բազմիցս համարում է «վայրենաբարո», նրանց իշխաններին՝ «չար»[3]: Հասկանալի է, որ ոչ մի պատմիչ իր ժողովրդի ու իր երկրի իշխանների մասին այդպես չի գրի: Անտեսելով այդ ամենը, ադրբեջանցի կեղծարարները աղվան են համարում թե այդ պատմիչին, թե նրա գիրքը, թե այդ գրքում ներկայացված հայ գործիչներին, որոնց թվում և 7 -րդ դ. բանաստեղծ Դավթակ Քերթողին, որի պոեմը մեզ է հասել հենց հայերեն այբուբենի տառաշարին համապատասխան աբրոստիքոսի ձևով: Մի բան, որը վկայում է նրա անհերքելի հայկական լինելը: Էլ չենք խոսում այն մասին, որ աղվան անունով ցեղ կամ ազգ հայտնի չէ աշխարհին. դա հորինված է «Աղվանք» տեղանունից, որը սոսկ աշխարհագրական իմաստ ունի:

Աղվանք մարզի երկու հատվածների միջև էական տարբերությունները մինչև վերջ էլ նրանց պահեցին անհամատե-

[1] Грамоты и древние исторические документы XVIII столетия, относящиеся до Грузии, том 2, СПб., 1902, с.XI, прим.1.
[2] С. В. Юшков, К вопросу о границах древней Албании, Исторические записки АН СССР, т.1, Москваз, 1937, с.137.
[3] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Գիրք Ա, գլուխ ԻԵ:

ղելի: Ըստ էության անօգուտ անցան նաև հայ եկեղեցու սպասավորների ջանքերը՝ հյուսիսի տարալեզու ցեղերին դարձի բերելու ուղղությամբ: Այդ ցեղերի առաջնորդներն ամեն կերպ ետ էին պահում իրենց ցեղակիցներին քրիստոնեական հավատից՝ ահաբեկելով, թե այդ հավատը դեմ է իրենց բարքերին, արգելում է կողոպուտն ու ավարառությունը և այլն: Արևելից աշխարհի հոգևոր-մշակութային ու քաղաքական ճակատագիրն անբաժան մնաց մայր հայրենիքից, միասնաբար էին լուծվում ծագող ազգային խնդիրները, միասնաբար պայքար էր մղվում ինչպես օտար նվաճողներից պաշտպանվելու, այնպես էլ հավատի ամրապնդման, հասարակական, հոգևոր կյանքի զարգացման համար:

11 -րդ դ. հայոց կենտրոնական թագավորության անկումից հետո, երբեմնի նախարարական Առանշահիկ տոհմի ժառանգներն Արևելից աշխարհում ձևավորեցին Խաչենի հզոր իշխանությունը: Այն իր իրավասության տակ առավ ամբողջ երկրամասը, հաճախ համարվելով նույնիսկ թագավորություն: Այդպես մի քանի դար Արցախ-Ուտիք երկրամասը ճանաչվեց Խաչեն անունով: Պարսից գերիշխանության տակ գտնվող Խաչենի իշխանությունը սելջուկ-թուրքական, թաթարմոնղոլական, անվերջանալի արշավանքների հետևանքով աստիճանաբար մանրատվեց, վերածվեց փոքր միավորների՝ մելիքությունների, վաղեմի հզոր տերերի ժառանգների իշխանության ներքո: Նույնիսկ այն ժամանակ, երբ Արևելից աշխարհում, կամ, ինչպես այդ ժամանակ կոչվում էր՝ Հայոց աղվանից աշխարհում, այսինքն՝ Աղվանք մարզի հայկական մասում Առանշահիկ նախարարական տոհմի ժառանգներն ստեղծել էին հայկական առանձին թագավորություն, մայր հայրենիքի հետ կապերը շատ սերտ էին: Այդ թագավորության ամրապնդման, կառավարման սկզբունքների մշակման, աղանդավորության դեմ պայքարի և այլ կարևոր հարցերում անընդհատ դիմում էին մայր հայրենիքի հոգևոր կենտրոններին, հայ նշանավոր գործիչներին, չնայած այդ ժամանակ

Հայաստանը (Արևելյան) հանդիսանում էր պարսկահպատակ առանձին մարզ:

Օտար նվաճողների լծից Հայաստանն ազատագրելու, պետականության վերականգնման համար մղվող պայքարում էլ Արևելից աշխարհն անբաժան էր մայր երկրից և հանդիսացավ նրա անբաժան մասը Բագրատունյաց հայկական թագավորության հաստատման ու գոյության ամբողջ ընթացքում:

14 - 15 -րդ դդ. աստիճանաբար գործածական դարձավ Արցախի Ղարաբաղ անվանումը: Միջին Ասիայի կողմից թափանցող քոչվոր անասնապահական ավարառու ցեղերն այստեղ հայտնաբերում են մի երկիր, որը նրանց համար պարզապես դրախտ էր՝ բարեբեր ու անծայրածիր դաշտեր, այգիներ, լեռնային արոտավայրեր: Թերևս այդտեղից էլ ծնվեց նոր, օտարալեզու անվանումը Ղարա-բաղ (պարսկերեն՝ մեծ այգի), ինչպես որ իրենց բուն հայրենիքում նրանք ունեցել են Կարա-Կում (մեծ ավազուտ), Կարա-Բողազ գյոլ (մեծ երախով լիճ) և այլն: Մինչև 20 -րդ դ. առաջին տասնամյակները Ղարաբաղ անվանմանը զուգահեռ գործածվում էին նաև Արցախ, Ուտիք, Արևելից աշխարհ, Խաչեն անվանումները, իսկ հայ եկեղեցու այդ թեմը, որն իր հատուկ պայմանների և ավելի բարձր առաքելության շնորհիվ կոչվում էր կաթողիկոսություն, մինչև 19 -րդ դ. առաջին տասնամյակները շարունակում էր կոչվել Աղվանից կամ պարզապես Գանձասարի կաթողիկոսություն:

Այսպիսով, Ղարաբաղ անվանումը եկավ փոխարինելու նախորդներին՝ Արցախ-Ուտիք, Արևելից աշխարհ, Խաչեն: Սակայն 1920 -ական թվականներից այդ անունը քաղաքական խեղաթյուրումների ենթարկվեց, ստացավ նաև Լեռնային հավելում, հորինվեցին նույնիսկ նորերը՝ Դաշտային, Ստորին, Վերին հավելումներով:

Այժմ այն մասին, թե ինչպես և ինչու են կատարվել այդ անվանափոխումները՝ իրենց հերթին պատճառ դառնալով

զանազան սխալների և շահարկումների: Անդրկովկասի վարչական բաժանումը ցարական իշխանությունների կողմից կատարվել էր այնպես, որ հիմնական ազգություններից որևէ մեկն իր անկախ պետականությունն ստեղծելու հնարավորություն չունենա: Դա առավել ցայտուն դրսևորված էր Ելիսավետպոլի՝ Գանձակի նահանգում: Նահանգի լեռնային ու նախալեռնային շրջաններում գերազանցապես հայեր էին ապրում համախմբված ձևով, իրենց պատմական հայրենիքում, ներառյալ Գանձակ-Ելիսավետպոլ քաղաքի հայկական մասը՝ իր շուրջ 20 հազար հայությամբ, իսկ քաղաքի մյուս մասը, որը մինչև վերջերս էլ կոչվում էր «թուրքաց թաղ» և Կուր գետի աջափնյա հովտային ու ձախափնյա ամբողջ տարածքները, գերազանցապես բնակեցված էին մահմեդականներով, մասամբ էլ հայերով ու այլ ազգություններով: Երկու հատվածների կյանքն ու կենցաղը, տնտեսավարման եղանակը, ամբողջ ապրելակերպը լիովին տարբեր էին մեկը մյուսից, եթե չասենք՝ հակադիր: Այդ և այլ պատճառներով հաճախակի ընդհարումներ էին տեղի ունենում հայերի ու մահմեդականների, հատկապես՝ քոչվոր կամ կիսաքոչվոր կյանք վարող ցեղերի միջև: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը համոզված էր, որ տնտեսապես ավելի շահեկան կլինի նահանգի լեռնային մասն անջատել դաշտայինից, որով կառավարումը նույնպես արդյունավետ կլինի: Նախատեսվում է ստեղծել երկու նահանգ՝ Ելիսավետպոլի (մահմեդական) և Գանձակի (հայկական): Այդ ծրագրին միասնաբար դեմ են հանդես գալիս մահմեդական և վրացական քաղաքական ուժերը: Քննարկումը երկար շարունակվում է: 1917 թ. Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը նույնպես անդրադառնում է այդ նահանգի լեռնային մասը (Գանձակը) դաշտայինից առանձնացնելու, երկու առանձին նահանգներ ստեղծելու խնդրին: Անհամաձայնության պատճառով հարցը դարձյալ չի լուծվում, բայց քաղաքական շրջաններում արմատավորվում է Լեռնային Գանձակ հասկացությունը:

1920 -ականներից ադրբեջանական իշխանությունները մոռացության են տալիս Լեռնային Գանձակ արտահայտությունը՝ գործածության մեջ դնելով Լեռնային Ղարաբաղ, Հարթավայրային Ղարաբաղ, Վերին և Ստորին Ղարաբաղ շինծու անվանումները: Դրանք որևէ կոնկրետ բովանդակություն չունեին, շատ անորոշ էր դրանց իմաստը, ուստի ցանկացած քաղաքական իրավիճակում կարող էին ցանկացած իմաստ ներարկել դրանց: Այդպես էլ եղավ: Եթե մինչ այդ հրատապ էր հայկական, այսինքն՝ Լեռնային Գանձակը հարթավայրայինից՝ մահմեդականից տարանջատելը, ապա այժմ սկսվեց քննարկվել հենց Լեռնային Գանձակի՝ հայերով ու մահմեդականներով բնակեցված շրջանների տարանջատումը:

Ցավոք, հայ քաղաքական ուժերը չնկատեցին այդ խորամանկությունը, նույնիսկ մինչև հիմա էլ շարունակում են 1918 - 1920 թթ. իրողությունների կապակցությամբ Ղարաբաղին կպցնել «Լեռնային» շինծու մակդիրը: Նույնիսկ փաստաթղթերի շատ արժեքավոր ժողովածուն կոչվել է այդպես, չնայած նրանում ամփոփված 1918 - 1920 թթ. փաստաթղթերն այդպիսի հավելում չունեն: Անգամ 1989 թ. Բաքվում լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողովածուում՝ 1920 թվականներից մինչև 1930 -ական թթ. հրապարակված փաստաթղթերում օգտագործված է Ղարաբաղ ձևը[1]: Որքան էլ տարօրինակ, հոգեբանական մի ցավալի իներցիայո՞վ, թե՞ կարծրացած մտածելակերպով, առանձին հայ հեղինակներ նույն այդ փաստաթղթերը վկայակոչելով, իրենց կողմից կպցնում են «լեռնային» հավելումը: Իսկ դա ոչ թե լեզվական կամ գիտական, այլև առաջին հերթին քաղաքական լուրջ կարծատեսություն է:

---

[1] К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской ССР (документы и материалы), Баку, 1989, сс. 94, 98, 103, 105, 106, 108, 163, 204.

Այսպիսով «Ղարաբաղ» անվանումը որոշ իմաստով կարող է համարվել «Արևելից աշխարհի» իրավահաջորդը: «Ղարաբաղ» անվան մեջ, ընդարձակ առումով, այնպես, ինչպես հասկացվել է վերջին երեք դարերի ընթացքում, ամփոփվում է Հայկական Բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան ծայրը, սահման ունենալով Կուր գետի հովիտը հյուսիս արևելքում և Արաքսի հովիտը հարավ-արևելքում: Պատմական տեսակետից այս սահմանների մեջ պարփակված Ղարաբաղը համապասխանում է հին Հայաստանի նահանգներից Ուտիքի մի մասին և ամբողջ Արցախին, իսկ ըստ նոր ժամանակների վարչական բաժանումների՝ Գանձակի գավառի մի մասի, Ջիվանշիրի, Շուշու, Կարյագինի, գավառներին: Ղարաբաղին կցված է Միլի տափաստանը, որ կոչվում է և Ղարաբաղի Տափաստան: Բայց, ինչպես գրել է Լեոն, «այս կցումն արհեստական է, որովհետև այդ տափարակը աշխարհագրական և կուլտուրական տեսակետից մի բոլորովին առանձնացված աշխարհ է...»[1]:

Երկրամասի բնակչությունն ապրում էր միասնական հոգևոր կյանքով (նույն թեմի կազմի մեջ), հաղորդակցվում էր միասնական բարբառով, կապված էր միասնական դավանանքով, տնտեսավարման եղանակով, սովորություններով և այլն: Դարերի ընթացքում այդ սերտ կապերի ու ընդհանրությունների հետ էլ բազմիցս ներքին առանձին տեղաշարժեր են կատարվել՝ գյուղից գյուղ, շրջանից շրջան, որի շնորհիվ այդ ամբողջ երկրամասի հայությունն իրենից ներկայացրել է մեկ միասնական ու միանման հանրույթ: Իսկ թե կոնկրետ ի՞նչ սահմանների մեջ է ճանաչվում Ղարաբաղը, այդ մասին կարելի է հիշատակել տարբեր հեղինակների կարծիքներ, սակայն, թերևս բոլոր այդ կարծիքների հիման վրա, բուն պատմական իրողությունն արձանագրված է պետական ամենալուրջ փաստաթղթի մեջ: Հայաստանի Հանրապետության 1920 թ. մայիսի 25-ի օրենքի մեջ երկրի չորս մարզերի սահմանների վերաբերյալ նշված է. Սյունիքի մարզի մեջ մտնում են. «Զանգեզուրը և Ղարաբաղը (Վարանդան, Խաչենը, Գյուլիստանը, Դիզակը, Ջրաբերդը և Գանձակի նահանգի հայկական մասերը)»[1]: Եվ պատմական և՛ իրավական առումով ընդունելին հենց այս բացատրությունը կարող է լինել:

1921 թ. բոլշևիկյան իշխանությունները, ոտնահարելով ժողովրդի կամքը, պատմական իրողությունը, նույնիսկ բոլշևիկյան կուսակցության Կովբյուրոյի քվեարկության արդյունքը, Ղարաբաղը բռնակցեցին Ադրբեջանին՝ երաշխավորելով նրա ինքնորոշման իրավունքը: Ուշագրավ է, որ սկզբում այն կոչվում էր «Ինքնավար Ղարաբաղ», «Ղարաբաղի ինքնավար մարզ», «Ղարաբաղի ինքնավար շրջան» և որևէ ձևով չէր մատնանշվում ազգային պատկանելությունը՝ հայկական, չնայած նրան, որ ԽՍՀՄ բոլոր ինքնավարությունները ճանաչվում էին իրենց հիմնական, այսպես ասած «տիտղոսային» ազգի անունով՝ ադիգեյական, հրեական, բաշկիրական և այլն: Չկար նաև «լեռնային» կցորդը:

Ադրբեջանը ներկայումս հաճախ արդեն գործածում է ոչ թե Լեռնային, այլ Վերին Ղարաբաղ շինծու անվանումը: Եվ դա լուրջ նպատակ ունի. այդ ձևով ամեն կերպ փորձ է արվում մոռացության տալու «Լեռնային Ղարաբաղ» անվանումը, որը քաղաքական աշխարհում հիշեցնում է մարտնչող ու հաղթանակած երկրամաս: ԼՂՀ մայրաքաղաքը Ստեփանակերտ չեն կոչում, այլ գործածվում է «Խանքենդի» օտարամուտ անվանումը, որպեսզի հնչի թուրքերեն՝ ընդգծելով իրենց համար ցանկալի պատկանելությունն:

---

[1] Լեո, Սահմանավեճեր, Լոռի-Ախալքալակ, Ղարաբաղ, Բ հրատ., Աթենք, 1990, էջ 79:

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.199, ց.1, գ.160, էջ 134, Հայաստանի Հանրապետության Պառլամենտի օրենքները (1918 - 1920 թթ.), Եր., 1998:

Մինչդեռ Ստեփանակերտ անվանումը ընդունված է Ղարաբաղի մարզկոմի 1923 թ. սեպտեմբերի 18 -ի նիստում և այնուհետև Ադրբեջանական ԽՍՀ բոլոր վավերագրերում օգտագործվել է Ստեփանակերտ[1]:

Անվանումների հարցում առավել աններելի ու վնասակար է հայկական կողմի, մեղմ ասած՝ անփութությունը: Ամենապատասխանատու տեղերում հաճախ նույնացվում է Արցախ և ԼՂՀ, Ադրբեջան և ադրբեջանցիներ հասկացությունները գործածվում են 1918 թ. նախորդած նույնիսկ ավելի հեռավոր ժամանակների պատմական իրողությունների կապակցությամբ: Տուրք տալով ադրբեջանական կողմի հերթական սադրանքին, նշվում են նույնիսկ ազերի՝ իբրև առանձին էթնոս: «По следам Азербайджанской Демократической Республики» արժեքավոր գրքի մեջ (Москва, изд-во "Европа", 2007) հեղինակները՝ Մ. Վոլխոնսկին և Վ. Մուխանովը, համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Հարավային Կովկասի մահմեդական բնակչությունը ազգային նույնականություն (идентичность) չի ունեցել: 19 -րդ դ. վերջերից, հատկապես 20 -րդ դ. առաջին տասնամյակներում պանթուրքիզմի գաղափարախոսության ակտիվ տարածման, ինչպես նաև ամբողջ Ռուսական կայսրության կազմի մեջ գտնվող ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարթոնքի պայմաններում Հարավային Կովկասի մահմեդական մտավորականության ներկայացուցիչներն սկսում են մտահոգվել իրենց հավատակիցների ազգային նույնականության ձևավորման խնդիրներով: Քաղաքական պայքարի մեջ դա կարող էր կարևոր գործոն դառնալ: Հարավային Կովկասի (առավելապես Արևելյան Անդրկովկասի) մահմեդական ազգաբնակչության՝ իբրև ազգ ձևավորումը բարդանում էր նրանով, որ նախ՝ երկրամասի մահմեդականությունը միասնական զանգված

[1] К истории образования Нагорно-Карабахской Автономной области..., с.184.

չէր, այլ մի մասը սուննի էր, մյուսները՝ շիիթ, այն էլ տարբեր ազգությունների, մյուս կողմից՝ այդ բնակչության մեջ քաղաքական արդյունավետ աշխատանք տանելը շատ դժվար էր, որովհետև նրա գերակշռող մասը անգրագետ էր: Նույնիսկ երբ արդեն հասունացել էր Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ազգային հանրապետությունների ձևավորումը Հայաստանում, Վրաստանում և գերազանցապես մահմեդականներով բնակեցված տարածքներում, չգիտեին ինչ անվանում տալ վերջիններիս, ու նախնական ձևով այն կոչվում էր Մուսուլմանական: Բնակչության այդ զանգվածի մի մասը հավատով, էթնիկական արմատներով ու քաղաքական կողմնորոշումներով կապված էր Թուրքիայի, մյուս մասը՝ Իրանի հյուսիսի Ատրպատական՝ Ադրբեջան նահանգի թրքախոս բնակչության հետ: Վերջին հանգամանքից ելնելով էլ նորաստեղծ պետական կազմավորումը կոչվեց Ադրբեջան: Այդ տարածքներում նախկինում գոյություն են ունեցել Բաքվի, Նուխիի, Գյանջայի պարսկական խանություններ, որոնց վրա պատմության մեջ երբեք չի տարածվել (առավել ևս նրանց չի միավորել) «Ադրբեջան» աշխարհագրական կամ վարչական անվանում:

Ադրբեջանի պատմագրության հիմնադիրներից մեկը՝ Ե. Պախոմովը, բացատրում է, որ այդ հանրապետությունը ժամանակավորապես կոչել են տվյալ տարածքի հետ առնչություն չունեցող «Ադրբեջան» անունով, որովհետև ավելի հարմար անուն չեն գտել. «Ադրբեջան անունը երբեք չի տարածվել Արաքս գետից հյուսիս գտնվող հողերի վրա, միայն 1917 թ., երբ Անդրկովկասյան կոմիսարիատը բաժանվեց Վրաստանի, Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի, միտք ծագեց ստեղծել մի պետություն, որը միավորեր Ռուսաստանի և Պարսկաստանի բոլոր այսպես կոչված «ադրբեջանական թուրքերին»: Այդ պետությանը նախնական կերպով ժամանակավորապես տրվեց Ադրբեջան անունը, սակայն չհաջողվեց իրականացնել այդ գաղափարը, և

41.553

ադրբեջանական կոչված նոր հանրապետության մեջ մտավ միայն Արևելյան Անդրկովկասը, բայց Ադրբեջան անունը թողեցին՝ ավելի հարմար բառ չգտնելու պատճառով, քանի որ Շիրվան, Առան և այլ պատմական անունները այդ հանրապետության միայն առանձին մասերին են վերաբերում»[1]: Այդ մտացածին տեղանունից էլ հետագայում հորինել են «ադրբեջանցի» էթնոս (նույնիսկ՝ «ազերիներ»):

Բնակչության հիմնական խմբերն էին պարսկական Ատրպատականից դուրս եկած թուրքերը, հայեր, ռուսներ, լեզգիներ, քրդեր, թալիշներ և այլն: 1930 -ական թվականներից միայն սկսեց գործածության մեջ մտնել ադրբեջանցի բառն իբրև էթնոնիմ: Հետաքրքիր է, որ այդ ժամանակաշրջանում Հայկական ԽՍՀ -ում բնակվող թրքախոս ցեղերը կոչվում էին կարափափախներ: Սակայն Ադրբեջանում ազգային նույնականության զգացում կամ գիտակցություն մինչև հիմա, ըստ էության, այդպես էլ չձևավորվեց՝ այդպիսի հարցերը չեն կարող լուծվել իշխանության կամքով, այն էլ պատմական կարճ ժամանակում:

Ազգային նույնականության գիտակցության բացակայությունը նշանակում է, որ բացակայում է նաև տվյալ հողի նկատմամբ հավաքական տիրոջ գիտակցությունը, պատմական հայրենիքի զգացումը: Հենց դա էր պատճառը, որ Ադրբեջանի իշխանությունները 1988 թ. կարողացան հայ խաղաղ բնակչությանը ջարդի ու կողոպուտի ենթարկող հրոսակախմբեր ստեղծել, հայերին դուրս մղել Խորհրդային Ադրբեջանի մեծ մասից, բայց երբ այդ ամենը վերածեց բացահայտ պատերազմի, մարդկային զգալի ռեսուրսներ ունեցող այդ երկիրն ստիպված վարձկաններ էր բերում Թուրքիայից, Աֆղանստանից, Պակիստանից ու այլ երկրներից: Սակայն՝ անարդյունք: Տասնյակ հազարավոր ադրբեջանցի ջարդարարներ, որոնք մինչ այդ անարգել սպանում, կողոպուտի էին ենթարկում հայ խաղաղ բնակչությանը, խայտառակ կերպով պարտվեցին ու փախուստի դիմեցին հայ ինքնապաշտպանական փոքրաքանակ ուժերի առջև 1992 - 1994 թթ.:

Անվանման խեղաթյուրումն ու շփոթը նոր թափով սկսվեց 1988 թ.: ԼՂԻՄ -ի մարզխորհրդի փետրվարի 20 -ի որոշումը մարզն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին սկիզբ դարձավ ազգային-ազատագրական լայն շարժման: Ըստ էության դա պայքար էր Ղարաբաղի ինքնորոշման համար, որն ամբողջ իր բազմադարյան պատմության ընթացքում Հայաստանի անբաժան մասն է եղել, նույն ձևով 1918 - 1920 թթ. Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մասն է կազմել, միայն Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Ռուսաստանն այն բռնակցել է Ադրբեջանին իբրև առանձին ինքնավար միավոր: Չնայած շարժումը սկիզբ էր առել ԼՂԻՄ -ում՝ մարզը Հայաստանի հետ միավորելու պահանջով, իրականում դա պայքար էր ամբողջ Ղարաբաղի ինքնորոշման համար: Ցավոք, Գանձակի հայկական շրջանները, որոնք խորհրդային տարիներին մանրատվել ու վերածվել էին Շամխորի, Դաշքեսանի (հայկական Քարհատ) Խանլարի շրջանների, արագորեն հայաթափվեցին: ԼՂԻՄ -ի անմիջական շուրջը գտնվող ղարաբաղյան տարածքների մեծ մասի բնակչության կազմը ադրբեջանական իշխանությունների ծրագրված հակահայկական քաղաքականության հետևանքով գրեթե լրիվ ադրբեջանականացվել էր, բացի Շահումյանի շրջանից, պատմական Գյուլիստանի գավառից, որը համառորեն ինքնապաշտպանություն էր մղում: Ստեղծված հանգամանքներում հենց միայն այս երկու հատվածը՝ ԼՂԻՄ -ը և Շահումյանի շրջանը, 1991 թ. սեպտեմբերի 2 -ին միավորվեցին՝ հռչակելով ԼՂՀ: Սակայն իրականում դա ամբողջ Ղարաբաղի պետականությունն է: Պատերազմի ընթացքում Շահումյանի շրջանը, Մարտակերտի

[1] Е. А. Пахомов, Краткий курс истории Азербайджана, Баку, 1923, с.11.

ու Մարտունու շրջանների որոշ տարածքներ 1992 թ. զավթվեցին Ադրբեջանի կողմից ու հայաթափվեցին: Դրան հակառակ, ղարաբաղյան զգալի տարածքներ ազատագրվեցին հայկական ուժերի կողմից՝ անմիջական սահման ստեղծելով ՀՀ-ի հետ, հարավում էլ սահման դարձնելով Արաքս գետը՝ ինչպես որ եղել է պատմության ամբողջ ընթացքում: Հետևապես ԼՂՀ-ն այսօր ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի տարածքներն են, այլ ներառում են նաև ազատագրված տարածքները: Իսկ դա սոսկ անվանման խնդիր չէ, այլ բովանդակային էական տարբերություն ունի:

1991 թ. սեպտեմբերի 2-ին ամբողջ Ղարաբաղի միայն մի հատվածում՝ ԼՂԻՄ-ում ու Շահումյանի շրջանում էր հայությունը պահպանվել և դիմագրավում էր Ադրբեջանի վիթխարի քաղաքական ու ջարդարարական ուժերին՝ պաշտպանելով իր պատմական հողը: Գործնականում միայն այդ տարածքներում էին պահպանվել իշխանության օրինական կերպով ձևավորված մարմիններ, կային ժողովրդի կողմից ընտրված պատգամավորներ, ուստի ԼՂՀ-ն հենց միայն այդ սահմանների մեջ հռչակվեց: Սակայն նա ամբողջ Ղարաբաղի հայության իրավունքների պատշպանն է և Ղարաբաղի ամբողջ տարածքի պահանջատերը, ինչպես որ Հայաստանի Հանրապետությունն է ամբողջ հայության համար ազգային պետություն ու երբեք չի կարող հրաժարվել Թուրքիայի կողմից զավթված իր տարածքների պահանջատիրությունից:

Այսպիսով, ներկայիս ԼՂՀ-ին (ներառյալ արցախյան ազատագրված տարածքները) պատմական տարբեր ժամանակներում տարբեր անվանումներ են տրվել: Հիմնավորապես տարբեր է եղել նաև դրանց բովանդակությունը: Հետևապես, անվանումների նկատմամբ քմահաճ վերաբերմունքը կամ դրանք միմյանց հետ շփոթելը քաղաքական լուրջ սխալներ է պարունակում: Իսկ այժմ այն

մասին, թե պատմական տարբեր ժամանակներում պետականության ինչպիսի ձևեր են գոյություն ունեցել երկրամասում և ինչպես է նրանց պատմական զարգացումը հանգեցրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձևավորմանն ու զարգացմանը:

2. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Պետական կազմավորումներ Հայկական լեռնաշխարհում հայտնի են մեզնից դեռևս չորսուկես հազար տարի առաջ: Միասնական հայկական թագավորության ստեղծումը Մովսես Խորենացին կապում է Վաղարշակ թագավորի գործունեության հետ: Վաղարշակը միավորել է հայկական մանր թագավորությունները, հայոց լեզվի տարածման սահմաններում ստեղծել միասնական պետություն, ինչպես արդեն ասվել է՝ հյուսիսում սահման դարձնելով Կուր գետը: Այդ պետության կազմի մեջ մտնում էին տասնհինգ նահանգներ՝ նախարարություններ, որոնցից ամեն մեկն, ըստ էության, մի ինքնուրույն թագավորություն էր: Այսինքն՝ միասնական հայկական թագավորությունը ներկայիս իմաստով դաշնային պետական կառուցվածք է ունեցել: Նախարարներից յուրաքանչյուրն ինքն էր հարկեր հավաքում, զորք պահում և այլն, սակայն ընդունում էր կենտրոնական թագավորության գերագահությունը, որոշակի հարկ էր վճարում, իսկ պատերազմի ժամանակ զորք էր տրամադրում: Տարբեր է եղել նրանց տարածքի չափը, զորքի քանակը, տնտեսական կարողությունը, քաղաքական ուժն ու դերը երկրի կյանքում: Այդ ամենին համապատասխան էլ նրանցից յուրաքանչյուրն իր հստակ տեղն էր զբաղեցնում թագավորի շուրջը, որը նշված է վաղ միջնադարից պահպանված փաստաթղթի՝ Գահնամակի մեջ:

Դեռևս 5-րդ դ. հայ պատմիչները գրել են, որ Արցախը Հայաստանի հզոր ու ամուր պաշտպանված նահանգներից է, որը վտանգի պահին միշտ կարևոր դեր է կատարել երկրի կյանքում: Բազմավաստակ Լեոն Հայաստանի սահմանների պաշտպանական նշանակության կապակցությամբ գրում է. «Աշխարհագրական քարտեզը, պատմությունն իր բազմադարյան պնդումներով ապացուցում են, որ առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից»[1]:

5-րդ դ. առաջին կեսին հայկական թագավորության անկումից հետո այս հողի վրա Առանշահիկ բնիկ նախարարական տոհմը ստեղծել է առանձին թագավորություն: Այն իր ծաղկումն ապրեց Վաչագան Բարեպաշտ թագավորի օրոք՝ 5-րդ դ. վերջերին և 6-րդ դ. սկզբներին: Ուշագրավ է, որ նույնիսկ գտնվելով Պարսկաստանի կազմի մեջ, Հայաստանի այդ երկրամասը պահպանել է իր կիսանկախ վիճակը: Պարսից տիրակալները ճանաչել են այդ հողի հնամյա տերերի իրավունքները: Ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացու պատմությունը, Վաչագանն իր թագն ստացել է պարսից շահից:

Հայոց աշխարհն այդ ժամանակ արդեն բաժանված էր Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև: Պարսկական մասում 428 թ. վերացվել էր հայոց Արշակունիների թագավորությունը, ստեղծվել մարզպանություն: 301 թ. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո մեծ ուշադրություն է դարձվել երկրի այս ծայրաշրջանին՝ արտաքին վտանգին դիմակայելու, հյուսիսի վայրենաբարո ցեղերին դարձի բերելու նպատակով: Պատահական չէ, որ այստեղ եպիսկոպոս է նշանակվել հենց Գրիգոր Լուսավորչի թոռը՝ պատանի Գրիգորիսը: Մեսրոպ Մաշտոցը նույնպես իր ստեղ-

[1] Լեո, Սահմանավեճեր, էջ 81:

ծած գրերը տարածելու, հայկական նոր դպրոցներ բացելու առաքելությունը թերևս առաջինը երկրի այս կողմերից է սկսել:

Վաչագան թագավորը բեղմնավոր գործունեություն է ծավալում երկրի ներքին կյանքը բարելավելու, աղանդավորության դեմ պայքարի, քրիստոնեական հավատի ամրապնդման ուղղությամբ: Նա, ինչպես պատմիչն է վկայում, «տարվա օրերի թվով եկեղեցիներ է կառուցում»: Բացում է բազմաթիվ դպրոցներ՝ անձամբ հոգ տանելով դրանց բարեկարգման մասին: Այդ ամենի շնորհիվ նա ստացել է Բարեպաշտ բնորոշ մականունը: Եվ ահա այդ Բարեպաշտ թագավորը, առաջինը հայ իրականության մեջ, գտնում է, որ մայր Հայաստանի երկփեղկված վիճակում իր ստեղծած թագավորությունը կարող է պահպանել ազգային միասնության ոգին ու շունչը, եթե կառավարվի ազգային արմատներից բխող օրենքներով: Նա դիմում է Հայաստան աշխարհի նշանավոր մտածողներին, համատեղ մշակվում են երկու տասնյակից ավելի դրույթներ՝ աշխարհիկ ու հոգևոր կյանքի կազմակերպման ու կառավարման վերաբերյալ: Թագավորի Աղվեն ամառանոցում հրավիրվում է աշխարհիկ ու հոգևոր տերերի մեծ խորհրդաժողով այդ դրույթները՝ Սահմանադրությունը, հաստատելու համար: Ուշագրավ է, որ խորհրդաժողովին նախագահում է ոչ թե Վաչագան Բարեպաշտն ինքը, այլ երկրի ազդեցիկ տերերից իշխան Վարդանը: Սահմանադրության ընդունման կապակցությամբ ուխտի մեծ հանդիսություն է կազմակերպվում: Իր ժամանակի համար ունեցած համապարփակ բնույթով, մշակման, քննարկումների և ընդունման եղանակով, դա պատմական եզակի երևույթներից է, կրկնում ենք՝ նկատի ունենալով այն հեռավոր ժամանակներում իրավագիտական մտքի զարգացման աստիճանը:

Պետական ամուր կարգի մասին է խոսում այն հանգամանքը, որ պետական ու եկեղեցական հարկերը պարտադիր են եղել բոլոր խավերի համար՝ թե՛ շինականների, թե՛

արքայական տոհմից սերվածների համար (կանոններ Գ, Ե): Շուրջ 1500 -ամյա հայկական առաջին այդ Սահմանադրությունը, որի բնագիրն ամբողջությամբ պահպանվել է Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմության» մեջ, Վաչագան թագավորի գործունեության պսակն է հանդիսանում: Այն անուրանալի դեր է կատարել Արցախ աշխարհում իրավական գիտակցության արմատավորման և պետականության հարատևման գործում: Հարկ է նշել, որ երկար ժամանակ այդ Սահմանադրությունը թյուրիմացաբար համարել են եկեղեցական կանոնների ժողովածու: Առաջին անգամ այն ըստ արժանվույն գնահատվել է Բագրատ Ուլուբաբյանի կողմից, որը բավական հանգամանորեն ներկայացրել է Վաչագան Բարեպաշտի պետականաստեղծ գործունեությունը[1]: Վաչագան Բարեպաշտի թագավորությունը Բ. Ուլուբաբյանն իրավացիորեն համարում է «Մեծ Հայքի միասնական թագավորության վերացումից հետո Հին Հայաստանի տարածքի վրա գոյացած վարչա-քաղաքական անդրանիկ ինքնավար միավորը»[2]: Այդ փառահեղ հայ պետական գործչի՝ Վաչագան Բարեպաշտի դամբարանը գտնվում է իր բնիկ տոհմական հողի վրա, Մարտակերտի շրջանի Եղիշե առաքյալի վանքում, եկեղեցուն կից, բայց, ավաղ, մեղմ ասած անմխիթար վիճակում: Թագավորի գերեզմանն ամփոփված է դամբարանի մեջ, որը կանգուն է բազում դարեր շարունակ, սակայն արցախյան պատերազմի ընթացքում շուրջ մեկ տարի զավթված լինելով Ադրբեջանի կողմից, ենթարկվել է «ոսկի որոնողների» ավերածությանը: Այն արժանի է բարեկարգման ու ամենայն հոգածության:

Հետագա դարերում Առանշահիկների ստեղծած թագավորությունը ճյուղավորվել է, միշտ պահելով, սակայն,

[1] Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Եր., 1994, էջ 28 - 35:
[2] Նույն տեղում, էջ 52:

իր կիսանկախ վիճակը: Այդ հողի վրա անփոփոխ կերպով շարունակել են իշխել երբեմնի Առանշահիկ նախարարական տոհմի ժառանգները: Խոսելով 9 -րդ դ. առաջին կեսին օտար զավթիչների դեմ մղված պայքարի մասին, պատմիչը հպարտորեն գրում է. «Քաջ ու շքեղատեսիլ Սահլ Սմբատյան իշխանն Առանշահիկ և նրա արիազարմ եղբայրները իրենց զորքերով վրա տվին լուսադեմին, դիաթավալ արեցին ասպատակիչներին, մնացորդներին էլ ցիրուցան դարձրին և, որպես առյուծի ժանիքներից, փրկեցին գերյալներին»[1]:

10 - 13 -րդ դդ. լեռնաշխարհում հայտնի էր Խաչենի զորեղ իշխանությունը, կենտրոն ունենալով համանուն բերդամրոցը: Ուշագրավ է, որ Խաչենի իշխանությունը նույնպես ապրել է՝ առաջնորդվելով Սահմանադրությամբ՝ ազգային օրենսդրությամբ: Խաչենի տերերից մեկը եղել է գահերեց, գլխավոր, ավագ, և կրել է «Իշխանաց իշխան», պարզապես «Մեծ», հաճախ՝ «թագավոր» տիտղոսը[2]: «Մեծն Հասանը» կառավարել է 40 տարի (1142 - 1182 թթ.), նրա որդին՝ Վախտանգը՝ 32 տարի (1182 - 1214 թթ.), թոռը՝ Հասան Ջալալ Դավլան՝ 45 տարի (1216 - 1261 թթ.)[3]:

Իշխանաց իշխան Վախտանգի և նրա բարեպաշտ տիկնոջ՝ Արզու խաթունի հրավերով ու հովանավորությամբ Մխիթար Գոշը Խաչենում կազմել ու գրել է հայոց ազգային օրենքների առաջին ժողովածուն՝ «Դատաստանագիրք Հայոց» -ը: Հատկանշական է, թե Դատաստանագրքի հեղինակը հիշատակարանի մեջ ինչպես է նշում իր բարի կամքը. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամ իւր զգիրքս Դատատաստանի անսխալ

[1] Մ. Կաղանկատվացի, գիրք Գ, գլ.Ի:
[2] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք՝ Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 71 - 73:
[3] Դիվան հայոց պատմության, գ.V, Եր., 1982, էջ 38, 198 - 199:

ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»[1]: Ինչպես վկայում են պատմական անթիվ փաստերը, հետագա բոլոր դարերում Արցախի իշխանավորները «անսխալ ուղղութեամբ» են վարել Դատաստանագրքի պատվիրանները: Նույնիսկ պատերազմական իրավիճակներում, անգամ ոխերիմ թշնամու հետ նրանք առայսօր ձգտում են պահպանել օրենքի պահանջը: Այդպիսի խոր արմատներ ունեցող իրավական գիտակցությունն, անկասկած, կարևոր դեր է կատարել երկրամասի անկախությունը պահպանելու, սակավ ուժերով, բայց առավել կազմակերպված ու արդյունավետ կերպով բոլոր փորձություններին դիմակայելու գործում:

Ուշագրավ են այն տիտղոսները՝ պետական, իրավական առումով, որոնցով Հասան Ջալալ Դավլան ներկայացնում է իրեն իր իսկ հեղինակած Գանձասարի տաճարի շինարարական արձանագրության մեջ. «Բնակավոր [բնիկ] ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի»[2]: Հասան Ջալալ Դավլան իբրև իշխանության խորհրդանիշ կրել է թուր, որի երախակալին փորագրված էր. «Հասան Ջալալ իշխան Խաչենոյ»[3]:

Հասան Ջալալյանների իշխանական տոհմը աչքի է ընկել ոչ միայն Խաչենի ներքին կյանքը կարգավորող օրենքներով կազմակերպված արգասաբեր կառավարմամբ, այլև լայնախոհ, ճկուն քաղաքական. դիվանագիտական գործունեությամբ:

Ջալալ Դավլան իր հեռատես նախորդների նման երկիրը թաթար-մոնղոլական արշավանքներից պաշտպանելու ու պահպանելու նպատակով 1250 - 1251 թթ. կազմում է պատվիրակություն և դիվանագիտական առաքելությամբ

[1] Մխիթար Գոշ, նշվ.աշխ., էջ 71 - 73:
[2] Դիվան հայոց պատմության, գ.V, էջ 38:
[3] И. Орбели, "Гасан-Джалал. Князь Хаченский", Избранные труды, Ер., 1963, сс. 146, 159.

գնում Աստրախան, մոնղոլ Բաթու խանին սիրաշահում նվերներով, հպատակություն հայտնում: Բաթու խանը վերահաստատում է նրա իրավունքները, նվերներով ճանապարհում: Հպատակությունն արտահայտվում էր որոշակի գումարով հարկատվությամբ և մոնղոլների արշավանքներին հայկական զինուժի մասնակցությամբ: Հասան Ջալալին հաջողվում է բարեկամական հարաբերություններ ստեղծել Կիլիկիայի Հեթում թագավորի ու Ղիյաս-էդդին սուլթանի միջև և դրանով Կիլիկիան զերծ պահել մոնղոլական ավերիչ արշավանքներից:

Հասան Ջալալ Դավլան նույնաբնույթ դիվանագիտական առաքելությամբ 1255 թ. մեկնում է հեռավոր Մոնղոլիայի մայրաքաղաք Ղարա Ղորում՝ Մանգու խանին իր հպատակությունը հայտնելու: Այս ուղևորությունը տևում է հինգ տարի: Նրա հետ էին նաև կինը՝ Մամքանը և միակ որդին՝ Աթաբակը: Մանգու խանը նույնպես վերահաստատում է նրա իշխանական իրավունքները, ընծաներով ճանապարհում: Քաղաքական նպատակներով էր կատարվել Հասան Ջալալ Դավլայի դուստր Ռուզուքանի և Չարմաղանի որդու՝ Բորա-Նոյինի ամուսնությունը:

Հասան Ջալալ Դավլայի քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եզակի երևույթ էր: Նա փաստորեն ու իրավաբանորեն ներկայացնում էր և ճանաչվում իբրև անկախ, ինքնուրույն պետություն, թեև ոչ ամբողջ Հայաստանի ընդգրկմամբ:

Թաթար-մոնղոլական, թուրքական այլևայլ ցեղերի պարբերաբար կրկնվող արշավանքների պատճառով Խաչենի իշխանությունն էլ մանրատվեց, վերածվեց գավառական փոքր իշխանությունների: Չնայած դրան, ամբողջ երկրամասում հարատևում էր հայ կյանքը՝ որպես ամբողջություն, լինելով հայ եկեղեցու մեկ միասնական թեմ:

ժողովուրդն էլ ապրում էր իր բնիկ տերերի իշխանության ներքո:

Այդպիսի հանգամանքներում Առանձահիկ հնագույն նախարարական տոհմի ճյուղավորումների, ապա և Խաչենի հզոր իշխանության հիմքի վրա ստեղծվեցին ռազմավարչական նոր կազմավորումներ՝ մելիքություններ անունով: Մելիքները միշտ ունենում էին գահերեց, և դա պահում էր երկրամասի վարչական ամբողջականությունը:

Մելիքական առանձին տների ծագումն ու պատմական ճակատագիրը միմյանցից տարբեր է եղել, բայց իբրև պետական կազմավորումներ դիտարկելու տեսանկյունից կարևորն այն է, որ ռուսական արքունիքին հղած դիմումների մեջ նրանք ներկայանում են որպես «Հայոց թագաւորաց ազնիւ զինվորաց մնացեալ ժառանգք»[1]: Ուշագրավ է, որ ռուսական արքունիքին հղած իր գրությունների մեջ նույն ինքնանվանումը քանիցս մատնանշում է նաև ռուսական բանակի գեներալ, վրացի իշխան հայատյաց Ցիցիանովը: Նա, ռուսական բանակում ծառայող վրացի մյուս զինվորականների նման, խանդով էր վերաբերվում հայազգի աչքի ընկնող զինվորականներին և հեգնում էր հայ մելիքների կարծիքն այն մասին, որ իրենք ծագում են հայոց թագավորական տոհմից*[2]:

---

[1] Армяно-русские отношения в XVIII веке, т.IV, Ер., 1990, с.180.

* *Դրա պատճառը թերևս այն էր, որ հայ զինվորականներն իրենց քաջությամբ ու ռազմական տաղանդով էին աչքի ընկնում, բարձր պատիվների ու հեղինակության արժանանում, իսկ Ցիցիանովի նմաններին ռուսական արքունիքը կոչում ու պաշտոն էր տալիս՝ հիմնականում նրանց ազնվականական ծագումը և քաղաքական որոշ շահեր նկատի ունենալով: Այնուամենայնիվ, հենց նույն Ցիցիանովին, որը հայերին հեգնում էր, իսկ Բաքվի խանին վստահում, վերջինիս կողմից սպանվեց, դիակը ծաղրուծանակի ենթարկվեց և կեղտոտված նետվեց քաղաքի պարիսպներից դուրս, հայերը գաղտնի կերպով վերցրին, քրիստոնյային վայել կերպով հողին հանձնեցին:*

[2] Ռաֆֆի, Երկեր, հ.10, Եր., 1964, էջ 302:

16 - 17 դդ. Հայաստանում ազատագրական միտքը զարթոնք ապրեց: Այդ ժամանակներում երկրի եզակի շրջաններում էին միայն պահպանվել պետականության վերականգնման համար անհրաժեշտ նախադրյալներ՝ ռազմական, քաղաքական ուժեր և այլն, որոնցից մեկն էր Արցախը: Աշխարհի տարբեր երկրների քրիստոնյա պետություններին հղված հայերի օգնության խնդրագրերն անօգուտ անցան: Կյանքը համոզեց, որ առաջին հերթին պետք է միավորվեն հայկական մանրատված ռազմա-քաղաքական ուժերը: 17 -րդ դարի վերջերին այդպիսի ուժեր արդեն ձևավորվել էին Արցախում ու Սյունիքում, որոնք էլ հիմք դարձան հայ ազատագրական շարժման համար: Հաջողությամբ հետ շպրտելով զանազան օտար զավթիչներին, մելիքներն աստիճանաբար ամբողջությամբ իրենց ձեռքը վերցրին սեփական հողի ճակատագիրը: 1720 -ական թթ. Արցախն ու Սյունիքը հասան փաստական անկախության:

Պարսկաստանն ապրում էր ներքին ու արտաքին քաղաքական ծանր ժամանակներ և ի վիճակի չէր տերության ծայրամասերում ամուր պահելու իր իշխանությունը: Օգտվելով դրանից, Թուրքիան և Ռուսաստանը ձգտում էին տեր դառնալ թուլացած Պարսկաստանի անդրկովկասյան ու մերձկասպյան տարածքներին: Այդ հզոր պետությունների շահերի բախման հանգույցում գտնվող հայերը, բնականաբար, միայնակ չէին կարող ձեռք բերել ու պահպանել պետական անկախություն, անհրաժեշտ էր այնպիսի զորեղ դաշնակից, որի շահերին համահունչ լինեին հայերի ազատագրական ձգտումները: Այդպիսի դաշնակից հանդիսացավ հավատակից Ռուսաստանը, որը ձգտում էր օգտագործել հայերի զինական ուժը՝ Պարսկաստանին ենթակա մերձկասպյան ու այսրկովասյան տարածքներում հաստատվելու համար, որպեսզի իր ձեռքում պահի Արևելքից դեպի Եվրոպա ձգվող «մետաքսի ճանապարհը», օգտագործի

հայերի կարողությունն առևտրի ու մետաքսագործության, ծխախոտի արտադրության և այլ ոլորտներում:

Ակտիվ բանակցություններ են ծավալվում Ղարաբաղի մելիքների և Ռուսաստանի միջև: Լինելով Ղարաբաղում՝ Ռուսաստանի պատվիրակը համոզվում է, որ ամեն կերպ պետք է օգնել հայերին, որոնք ռազմական ու տնտեսական մեծ հնարավորություններ ունեն: Մելիքները կարող են մինչև քառասուն հազարանոց լավ զինված զորք դուրս բերել, երկիրը հարուստ է մետաղահանքերով, որտեղ կարելի է զենքի, մանավանդ հրազենի արտադրություն ծավալել: Նրանք ունեն բերքառատ դաշտեր, որոնք կարող են ռուսական բանակը ապահովել մթերքով և այլն[1]: Ռուսաց պատվիրակը զարմացած գրում է, որ այդպիսի կռվող ժողովուրդ, ինչպիսին Ղարաբաղի հայերն են, ոչ մի տեղ չկա[2]: Նրան հատկապես զարմացրել էր, որ լեռնաշխարհում «այսօր տասներկու հազար հեծյալ կա, բոլորն էլ հրացանով ու թրով զինված, իսկ թե հետևակ ինչքան կա, միայն Աստծուն է հայտնի, ու բոլորն էլ հրացանով են: Եվ ամեն օր հրացան են պատրաստում»[3]: Ցույց տալով երկրամասի ռազմավարական կարևոր դերը, պատվիրակը զգուշացնում է ռուսական արքունիքին, որ եթե թուրքերը մտնեն այդ տարածքները, հետո նրանց դուրս մղելը շատ դժվար կլինի: Եվ Ռուսաստանը խոստանում է օգնել հայերին՝ վերականգնելու իրենց պետականությունը:

---

[1] Армяно-русские отношения, том II, ч.2, Ер., 1967, с.319.

[2] Նույն տեղում, էջ 255:

[3] Նույն տեղում:

Համեմատության համար արժե հիշել, որ դրանից շուրջ 75 տարի հետո, ըստ ռուսական պաշտոնական աղբյուրների, վրացական զորքի տասը հոգուց միայն երկուսն ունեին հրացան, մյուսները զինված էին հոնի մահակներով (Акты кавказской археографической комиссии, том I, Тифлис, 1866, с.124).

Պետրոս Առաջին կայսրը 1722 թ. ծեռնարկում է արշավանք, նախապես տեղեկացնելով, որ հայերն ու վրացիները միավորվեն ու սպասեն մոտեցող ռուսական զորքերին, միանան ու վերջնականապես ազատագրվեն օտարի գերիշխանությունից: Սակայն սպասելիքները չեն իրականանում: Պետրոս Առաջինի արշավանքն ընդհատվում է: Ռուսական ու Օսմանյան կայսրությունները պայմանավորվում են առանց միմյանց հետ պատերազմելու իրար մեջ բաժանել Պարսկաստանին ենթակա Անդրկովկասն ու մերձկասպյան տարածքները: 1724 թ. նրանց միջև կնքվում է պայմանագիր, որով Անդրկովկասը, այդ թվում և Ղարաբաղը, «բաժին է հասնում» Թուրքիային, մերձկասպյան շրջանը՝ Ռուսաստանին: Սակայն Ղարաբաղի կամքը ոտնահարելով, նրանից գաղտնի կնքված պայմանագիրն անզոր է լինում տնօրինելու երկրամասի ճակատագիրը: Մելիքները քանիցս ջարդ են տալիս Ղարաբաղին տիրելու համար ուղարկված օսմանյան զորքին ու նշանակված կառավարիչներին և ետ շպրտում: Թուրքիան այդպես էլ չկարողացավ տիրել Ղարաբաղին:

Հայ զինական ուժերը, համախմբված Ղարաբաղում ու Սյունիքում, ձգտում էին մինչև Երևան ընկած հայկական տարածքները մաքրել օտար զավթիչներից, վերականգնել միասնական հայկական պետությունը[1]: Հայերի ազատագրական ձգտումները բախվում էին Թուրքիայի նվաճողական ծրագրերին: Այդ առումով ուշագրավ փաստ է պահպանվել 1725 թվականից, որը կարող է պատկերացում տալ Թուրքիայի ներկայիս քաղաքականության ու հայերի նկատմամբ նրա վերաբերմունքի պատմական արմատների մասին: Դա կարևոր է հատկապես Ղարաբաղի արդի խնդրի կարգավորման գործում միջնորդական առաքելություն

---

[1] Армяно-русские отношения, том II, ч.2, с.99.

դաշնային տիպի կառուցվածքը, որն առկա էր նաև 11 - 13 -րդ դդ.:

1720 -ական թթ. սկզբից, երբ Պարսկաստանի ներքին գահակալական կռիվների պատճառով երկրամասը լիովին անկախացել էր, և խախտվել էր մելիքների փոխհարաբերությունների ավանդական կարգը, նրանք այդ կարգը վերահաստատելու պահանջ էին զգում: Ռուսական արքունիքին հղած նամակներում բազմիցս առաջարկում էին մելիքներից մեկին ճանաչել գերագահ: 1720 -ական թթ.այդ խնդիրը չի լուծվում: Ազատագրական շարժման այդ բուռն ժամանակներում Գանձասարի կաթողիկոսությունն էր իրականացնում կենտրոնական իշխանության գործառույթը: Հիմնական հավաքները, քննարկումներն ու խորհրդակցությունները տեղի էին ունենում Գանձասարի վանքում: Նույնիսկ մելիքների միացյալ զորքը 18 -րդ դ. սկզբներին գլխավորում էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Եվ այս ամենը հիշեցնում է միասնական հայկական թագավորության ժամանակներում գոյություն ունեցած դաշնային տիպի պետականության կառուցվածք: Իսկ ահա 1730 -ական թթ. Պարսկաստանի ներքաղաքական իրավիճակի կարգավորման հետ վերականգվում են նաև կառավարման հին ավանդական կարգերը:

1736 թ. Նադիր շահը հաստատում է մելիքների անսահմանափակ իրավունքներն իրենց գավառներում: Դեռ ավելին. Արցախը դուրս է բերվում Գանձակի բեկլերբեկության կազմից: Դա այնքան նշանակալից երևույթ էր, որ ըստ պատմիչի բնութագրման, Գանձակի խանը դառնում է «թևերը կտրած թռչուն»[1]: Գերագահ է ճանաչվում Ջրաբերդի մելիք Ալլահ-Կուլին, որն աջակցել էր Նադիրին թուրքերի դեմ մղված կռիվներում և աչքի ընկել իր քաջությամբ, ու նրան մյուս

[1] Мирза-Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950, с.48.

մելիքների պես մելիք կոչելը քիչ կլիներ: Ալլահ-Կուլիին տրվում է սուլթանի տիտղոս[1]:

Հին Հայաստանի կառավարման կարգին բնորոշ մեկ այլ ավանդույթ ևս ամուր էր Արցախում: Հայտնի է, որ թագավորին, ինչպես նաև նախարարին, իշխանին, հետագայում՝ նաև մելիքին այդ պաշտոնում հաջորդում էր ավագ որդին: Այդ կարգն Արցախում այնքան ամուր էր, որ երբ Վարանդայում մելիքական աթոռը ավագ եղբորից խլում է Շահնազարը, մյուս մելիքները թշնամանում են նրա դեմ, Շահնազարին համարում ապօրինի կառավարիչ: Եվ դա, ցավոք, իր բացասական դերն է կատարում հետագայում:

Մելիքների իրավունքները դեռևս 16 -րդ դ. վերջերին ճանաչվել ու հաստատվել են Շահ Աբաս Առաջինի կողմից: Պարսից տիրակալները երբեք չեն միջամտել մելիքությունների ներքին կյանքին: Յուրաքանչյուր մելիք ինքնիշխան է եղել իր տիրույթում: Նրանցից մեկը միշտ ճանաչվել է գերագահ: Մելիքներն իրենց տիրույթներից հարկը հավաքել են, պահանջվող չափով և ուղարկել պարսից արքունիք՝ պարսից շահին՝ գերագահ մելիքի միջոցով: Մելիքներն իրենց այնքան ինքնուրույն ու վստահ են զգացել, որ առանձին դեպքերում նույնիսկ հրաժարվել են Պարսկաստանին հարկ վճարել: Վարանդայի Մելիք Շահնազարյան Մելիք Հուսեինը, օրինակ, օգտվելով 1720 -ական թթ. Պարսկաստանում տիրող խառն իրավիճակից, հարկ չի տվել, և այդ փաստն այնքան է կարևորվել, որ արձանագրվել է նրա շիրմաքարին[2]:

Մելիքներն ամեն կերպ պաշտպանում էին իրենց հողի, տիրույթի սեփականության ժառանգական իրավունքը: Հայտնի է, որ ռուսական արքունիքը 18 -րդ դ. քանիցս մելիքներին առաջարկել է իրենց հպատակներով

[1] Мирза-Адигезаль-бек, указ.раб., с.58.
[2] Դիվան հայ վիմագրության, հ.V, Եր., 1982, էջ 147:

տեղափոխվել Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական նպատակներին համապատասխան տարածքներ: Մելիքները կտրականապես մերժել են: 1789 թ. մելիքները դարձյալ դիմում են Եկատերինա 2-ին՝ օգնություն խնդրանքով: Առանձին մելիքներ համաձայնում են տեղափոխվել Դերբենտի շրջակայքը, պայմանով, որ «նոր երկրները պիտի համարվին իրանց սեփականություն, տալով մելիքներին և նրանց ժառանգներին լիակատար իշխանություն՝ իրանց հպատակների վրա տիրելու»[1]: Մելիքներն առանձնապես շեշտում էին հողային և իրենց «ունեցած վաղեմի արտոնությունների» հարցերը[2]: Համաձայնությունը չի կայանում: Եվ ոչ միայն այդ հանգամանքն էր դեր խաղում արքունիքի առաջարկը մերժելու հարցում, այլ նաև մելիքների նվիրվածությունն իրենց բնօրրան-հայրենիքին: Պատահական չէ Մելիք-Եգանի հեղինակած արձանագրությունը. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր տալու» (ես թույլ չտվեցի իմ Հայաստանը գերության տալու)[3]: Այսինքն՝ իր տիրույթը համարում էր Հայաստան և սերունդների առջև պատասխանատու էր զգում դրա համար:

Մելիքները լինելով ինքնիշխան ու անկախ իրենց տիրույթներում իրականացնում էին հետևյալ գործառույթները, որոնք բնորոշ են պետությանը: 1. Հավաքել են հարկեր, 2. ունեցել են զինված ուժեր, 3. կատարել են դատ, 4. պահպանել են կարգուկանոն: Մելիքը նաև զորքի հրամանատարն էր:

Հայ մելիքների իրավունքներին վերաբերող շահական ֆիրմաններում նշվել է, որ նրանք պարտավոր են լինել

[1] Ռաֆֆի, նշվ.աշխ., էջ 235, (*ընդգծումը Ռաֆֆունն է*):
[2] Նույն տեղում, էջ 236 - 237:
[3] Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 76:

արդարադատ, հոգալ իրենց երկրի շենացման, հպատակ ժողովրդի բարեկեցության մասին[1]:

Մելիքները կրում էին իշխանության խորհրդանիշ, ունեցել են իրենց կնիքները: Մեծ մասամբ լինելով անգրագետ, նրանց կնիքը կեռ սուր էր, վրան գրված «Ք՝ս ծառայ մելիք (անունը)»: Արդեն նշել ենք, որ Հասան Ջալալ Դավլան կրել է կեռ թուր, նաև մատանի՝ «Հասան Ջալալ, իշխան Խաչենոյ» մակագրությամբ[2]: Կնիքի փոխարեն հաճախ օգտագործվել է համրիչը՝ «տերողորմյան»: Եթե ինչ-ինչ պատճառներով մելիքը ներկա չէր լինում, ի նշան նրա համաձայնության ներկայացնում էին նրա տերողորմյան կամ թաշկինակը: Մելիքների կարծիքը որոշակի էր լինում նաև հոգևոր գործերում, մելիքի իշխանությունը գյուղերում ներկայացնում էր տանուտերը, որը նշանակվում էր մելիքի կողմից կամ ընտրվում համայնքի կողմից[3]:

Առանձին մելիքներ ընդհանուր իրավասություններից բացի, պարսից շահի կողմից հատուկ բարյացակամության են արժանացել: Նադիր շահը, օրինակ, Դ.իզակի մելիք Ավանին շնորհել է խանի տիտղոս, նրան անվանելով «բաբալը» (հոգևոր հայր): Այդ Ավան խանի ժառանգները հոր մահից հետո վայելում էին շահի հովանավորությունը: Մելիք Իսրայելի որդի մելիք Ալլահ-Կուլին շահից ստացել էր սուլթանի զինվորական աստիճան և կոչվում էր Ալլահ-Կուլի-սուլթան[4]: Աղա Մահմադ շահը Մելիք-Մեջլում մելիք Իսրայելյանին արտոնել էր, որ «1. երբ կամենա, կարող է անարգել մուտք գործել իր մոտ,

[1] Ա. Մաղալյան, Վարանդայի մելիքությունը, Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Ստեփանակերտ, 2006, էջ 129, 132, 135:
[2] Ի. Орбели, նշվ.աշխ., էջ 146, 159:
[3] Ե. Լալայան, Գանձակի գավառ, Երկեր, հ.2, Եր., 1988, էջ 108, 114, 241, 252 - 255:
[4] Ռաֆֆի, նշվ.աշխ., էջ 189:

2. ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կկատարվի, 3. արքունի գանձարանը նրա տրամադրության ներքո կլինի»[1]:

18 -րդ դ. կեսերին քաղաքական իրավիճակը վերստին փոխվում է Պարսկաստանում: Այդ երկրի հյուսիսային կողմերում տարածված թուրքալեզու քոչվոր անասնապահական ցեղերից մեկի մահմեդական առաջնորդ Փանահը, իր իսկ պատմիչի վկայությամբ, նենգ ու խարդախ միջոցներով հպատակեցնելով ցեղակիցներին, կարողանում է պարսից շահի կողմից նշանակվել Ղարաբաղի խան: Արժե նշել, որ հնում երկրամասը կառավարվում էր Պարտավում կամ Գանձակում նստող կուսակալի կողմից: Միայն 1752 թ. այն առանձնացվում է որպես Ղարաբաղի խանություն: Ուշագրավ է, որ խանությունը կոչվում էր Ղարաբաղի անունով և բաղկացած էր հինգ մելիքություններից՝ Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի, Դիզակի: Բայց կառավարիչը կոչվում էր Շուշվա անունով՝ Շուշվա խան, որովհետև միայն այդ բերդն էր նա ստացել Վարանդայի մելիքից: Հավանաբար պարսից շահին ձեռնտու էր մահմեդական կառավարիչ ունենալ քրիստոնյա երկրամասի ժողովրդի համար, որպեսզի կանխվեն վերջիններիս անկախության ձգտումները: Մելիքները քանիցս վտարել էին Փանահին հայոց հողից, բայց ի վերջո նա կարողացավ բարեկամություն հաստատել Վարանդայի մելիքի հետ, նրանից ստանալ Շուշվա բերդը՝ որպես նստավայր ու այդպես համարվել Շուշվա խան: Սակայն բուն Ղարաբաղի խանության ամբողջ տարածքը գտնվել է մելիքների իրավասության ներքո: Շուշվա խանը այլևայլ բռնությունների է դիմում՝ ջանալով մելիքներին հպատակեցնել իրեն: Տարբեր տեղերից հարկադրանքով իր քոչվոր ցեղակիցներին բերում, փորձում է նստակյաց դարձնել Ղարաբաղում, որպես իր համար հուսալի հենարան, ինչպես որ տեղեկացնում է խանի տոհմական

[1] Բաֆֆի, նշվ.աշխ., էջ 261:

պատմիչը[1]: Եվ որովհետև նրանք սովոր չէին նստակյաց տնտեսություն վարելու, հիմնականում կողոպուտով ու անասնագողությամբ էին զբաղվում, մանավանդ հովանավորված լինելով խանի կողմից: Ադրբեջանի պատմության հեղինակները հենց Բաքվում տպագրված գրքերի մեջ նշում են, որ դրանով ոչ միայն լեռնաշխարհի ժողովրդագրական պատկերն է սկսում փոխվել, այլև սկսում է քայքայվել տնտեսությունը[2]:

Շուշվա խաները Ղարաբաղի տարածքում հողային սեփականություն չեն ունեցել: Ընտանեկան գերեզմանատան համար Փանահ-խանը Հասան-Ջալալյաններից գնել է Աղդամը[3]: Այնուհետև նրանք և նրանց ժառանգները տիրեցին մահացած կամ բնօրրանից հեռացած մելիքների ու գյուղացիների կալվածքներին ու հողերին, իսկ ռուսական տիրապետության ժամանակ նրանց հաջողվեց կաշառքների և կեղծ փաստաթղթերի, խաբեբայությունների միջոցով տիրել բավական ընդարձակ կալվածքների:

Խանի և նրա ցեղակիցների դեմ պայքարում հայերի հույսը վերստին կապվում է Ռուսաստանի օգնության հետ: 1760 -ական թթ. նորից ակտիվանում է հայ ազատագրական միտքը, և Հայաստանի անկախության վերականգման գործում կարևոր դեր է ստանում Ղարաբաղը: Ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինը օգնության համար դեգերելով տարբեր երկրներում, ի վերջո մեկնում է Ղարաբաղ, հյուրընկալվում Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ: Ամիսներ շարունակ նրանք ծրագրեր են մշակում և

[1] Мирза Адигезаль-бек, Карабах-Наме, Баку, 1950.
[2] В. Н. Левиатов, Очерки истории Азербайджана в XVIII в., Баку, 1948, сс. 54 - 55.
Այստեղ Ղարաբաղը կամայական ձևով նշվում է իբրև Ադրբեջան: Այնուամենայնիվ, հենց նույն գրքի մեջ շեշտվում է, որ թուրքերն այդպես էլ չկարողացան իրենց իշխանությունը հաստատել այնտեղ (նշվ.աշխ., էջ 92):
[3] Բաֆֆի, նշվ.աշխ., էջ 330 - 331:

համոզվում են, որ առանց Ռուսաստանի օգնության անհնարին է հայ պետականության վերականգնումը:

1780 -ական թթ. սկզբներից Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերի մեջ վերստին բարձրանում է հայերի դերը: Կայսրությունը ձգտում է ընդլայնել իր հարավային սահմանները, և քանի որ հայ իրականության մեջ ռազմական կազմակերպված ուժ ներկայացնում էին հիմնականում Ղարաբաղի մելիքները, ուստի քանիցս պատվիրակներ են ուղարկվում հենց նրանց մոտ: Պատվիրակները ծանոթանում են մելիքական ուժերին, նրանց տրամադրում դեպի Ռուսաստան, հուսադրում վերջինիս օգնությամբ մոտալուտ ազատագրման գաղափարով: Նշանավոր ռուս զորավար Ա. Սուվորովը մանրամասն տեղեկություններ է պահանջում ու ստանում Ղարաբաղի զինական ուժի, բնական ու մարդկային ռեսուրսների, նյութական այլևայլ հնարավորությունների, նույնիսկ բուսական ծածկի մասին՝ արշավանք ձեռնարկելու նպատակով: Նա անձամբ կազմում է Հայաստանի քարտեզը, որի վրա նշում է «Ղարաբաղի մելիքությունները, որտեղ հայերն ապրում են սեփական իշխանության ներքո»[1]: Այսինքն՝ մելիքությունները շարունակում էին գոյատևել որպես որոշակի պետական կազմավորում:

Ռուսական արքունիքում Հայաստանի անկախության վերականգնման առաջին անհրաժեշտ քայլը համարվում էր Ղարաբաղի ինքնուրույն մարզի ստեղծումը: Եկատերինա Երկրորդ կայսրուհու կողմից մելիքներին տրված խոստման համաձայն՝ ազդեցիկ ռուս իշխան Գ. Պոտյոմկինը կազմում է ծրագիր և կարգադրում գեներալ Պ. Պոտյոմկինին՝ կենսագործել այն՝ տապալել Շուշվա Իբրահիմ խանին և ստեղծել Պարսկաստանից անկախ Ղարաբաղի հայկական մարզ: Ընդ որում, նա հետամուտ էր, որ դա հիմք ծառայի հայկական բոլոր հողերը և բոլոր հայերին միավորելու,

[1] А. В. Суворов, Документы, т.II, Москва, 1951, сс. 224 - 225.

միասնական հայկական պետության վերականգնման համար: «Սրանից հետո Ղարաբաղը պետք է կազմի՝ բացի ռուսներից ոչ մեկից կախում չունեցող մարզ, և ամեն ջանք պետք է գործի դնել, որպեսզի այս նոր մարզը կազմվի ժողովրդի համար առավել շահավետ կերպով: Դրա շնորհիվ հայկական մյուս ուժեղ գավառները նույնպես կամ կհետևեն նրանց օրինակին, կամ մեծ թվով հայեր կգան Ղարաբաղ», 1783 թ. ապրիլի 6 -ին գրել է իշխան Գ. Պոտյոմկինը[1]:

Եկատերինա Երկրորդին ներկայացրած զեկույցի մեջ իշխան Գ. Պոտյոմկինն այն համոզմունքն է հայտնում, որ «Ղարաբաղը՝ բաղկացած հայ ժողովրդից, պետք է ազգային կառավարություն ունենա, և այդ միջոցով Ասիայում վերականգնվի քրիստոնեական պետությունը՝ համաձայն ծ.կ.մ. բարձրագույն խոստումների, որոնք իմ միջոցով տրվել են հայ մելիքներին»[2]: Փաստորեն <u>դա առաջին միջազգային փաստաթուղթն է, որտեղ ժամանակի խոշոր տերություններից մեկը ճանաչում է երկրամասի բնիկ ժողովրդի ինքնորոշման իրավունքը</u>*, ընգծվում է, որ Ղարաբաղը որպես հայկական տարածք պետք է ունենա ազգային կառավարում, կազմի հայկական անկախ մարզ: Պետք է ասել, որ այդպիսի ծրագրի համար Ռուսաստանը ոչ միայն պատմական, այլև իրական ու իրավական հիմքեր ուներ: Բանն այն է, որ մելիքները Եկատերինա Երկրորդ կայսրուհուն ուղղված դիմումների մեջ ներկայանում էին որպես «հայ Արշակունյաց թագավորական տնից մնացած ազնիվ զինվորների ժառանգներ»[3]:

Վկայելով հայկական հողի վրա ազգային անկախ պետականություն ունենալու այսօրվա ԼՂՀ -ի պատմական իրավունքի մասին՝ այդ փաստաթուղթն արժեքավոր է նաև

[1] Армяно-русские отношения в XVIII веке, т.IV, с.239.
[2] Նույն տեղում, էջ 241:
* *Ընդգծումը մերն է:*
[3] Նույն տեղում, էջ 181:

մեկ այլ առումով: Այդ ծրագիրը կյանքի է կոչվել ժողովրդավարության եղանակով: Պահպանված բազմաթիվ փաստաթղթերը վկայում են, որ երկրամասի ճակատագրին վերաբերող կարևորագույն հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը մասնակցել և իրենց գրավոր համաձայնությունն են տվել հասարակության բոլոր խավերից ընտրված ներկայացուցիչները՝ հասարակ շինականից ու արհեստավորից[1] մինչև մելիքները և Գանձասարի կաթողիկոսը: Կայացված որոշման նկատմամբ յուրաքանչյուրն մասնակից ունեցել է անձնական պատասխանատվություն, դրա համար էլ անձնուրաց կերպով պաշտպանվել է այդ հողը: Պատահական չէ, որ պատերազմների բովով անցած ռուս գեներալ Վ. Դոլգորուկովը դեռևս 1727 թ. մայիսի 11-ին ղարաբաղցիների մասին գրում է. «Միայն Աստված ինքն է պահպանում նրանց, մարդկային մտքից վեր է, թե ինչպես են նրանք կարողանում պաշտպանվել այդքան ուժեղ թշնամուց»[2]:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Շուշվա խանը չնայած Պարսկաստանի կողմից նշանակված կառավարիչ էր, սակայն լինելով թուրքական ցեղից, գաղտնի կապեր էր պահպանում Թուրքիայի հետ, վերջինիս օգնությամբ Պարսկաստանից անկախանալու և Թուրքիային հպատակվելու նպատակով: Իսկ հենց որ մոտենում էր ռուսական վտանգը, նա վերջիններիս կողմն էր անցնում, ուստի վստահություն չէր ներշնչում ռուսներին: Այդպես ստեղծվեց մի անորոշ իրավիճակ, որը շարունակվեց շուրջ երկու տասնամյակ, մինչև որ Ռուսաստանն իրական հնարավորություն ունեցավ իր զորքերն առաջ շարժելու, իր ներկայությունն այդ տարածքի վրա իրապես ապահովելու համար: Ռուսական զորքը 1804 թ. գրավեց և կայսրությանը

[1] Армяно-русские отношения, т.II, ч.2, с.282.
[2] Նույն տեղում, էջ 294:

միացրեց Գանձակի խանությունը, որին հաջորդեց Ղարաբաղի խանության միացումը 1805 թ.: Այդ նվաճումները հաստատվեցին 1813 թ. Գյուլիստանի ռուս-պարսկական պայմանագրով, որով Ղարաբաղը միացվեց Ռուսաստանին:

Նոր միացված շրջանները Ռուսաստանը սկզբնական շրջանում կառավարում էր Շուշվա խանի ու տեղի ռուսական զինվորական հրամանատարության հսկողությամբ՝ պահպանելով նախկին վարչական բաժանումներն ու մելիքական կառավարման ավանդույթները: Շուշվա խանը հենց առաջին տարում դավաճանեց ռուսներին՝ հօգուտ Օսմանյան կայսրության, որի համար սպանվեց ռուսների կողմից, երբ կնոջ հագուստով ծպտված փորձում էր փախչել: Նրա ժառանգները ներում ստացան, շարունակեցին կառավարել մինչև 1822 թ., սակայն հետո նրանք էլ դավաճանեցին ու փախան Պարսկաստան: Ղարաբաղը կայսրության մյուս շրջանների նման աստիճանաբար վերածվեց վարչական միավորի: Մոռացության տրվեցին Ղարաբաղի հայկական մարզ ստեղծելու մասին մելիքներին տրված խոստումներն էլ, կազմված ծրագիրն էլ: Անդրկովկասն այնպես բաժանվեց նահանգների՝ գուբերնիաների և ուեզդների, որ վարչական սահմանները չհամընկնեին էթնիկական սահմանների հետ, որպեսզի հպատակ ժողովուրդներն ազգային պետականության ձգտումներ ու հնարավորություններ չունենան:

Ռուսաստանի օրենքներին զուգահեռ Ղարաբաղի հինգ մելիքություններին պատկանող բնակավայրերում պահպանվել ու գործել են հինը, ավանդականը: Մելիքների ժառանգները կոչվել են բեկեր և որոշակի արտոնություն են վայելել հարկատվության հարցում: Նրանք իբրև կալվածատեր հարկ են ստացել գյուղացիներից. վերցնելով բերքի տասներորդ մասը: Որոշիչ էր բեկի խոսքը դատի, հոգևորականի նշանակման, հարսանեկան արարողությունների և այլ համայնքային միջոցառումների

ժամանակ[1]: Ե. Լալայանը 19 -րդ դ. վերջին այս իրողությունները գրի է առել Գանձակի գավառում, որոնք բնորոշ են եղել նաև Խամսայի բոլոր մելիքությունների տիրույթներն ընդգրկող գյուղերի համար:

Ամբողջ Ղարաբաղը մտնում էր Ելիսավետպոլի (1804 թ. այդպես էր վերանվանվել հին հայկական Գանձակ քաղաքը) խոշոր նահանգի մեջ: Նոր պայմաններն, ինչ խոսք, չէին համապատասխանում հայերի դարավոր երազանքին, հայ-ռուսական շուրջ հարյուրամյա ակտիվ բանակցությունների ընթացքում ծնված ակնկալիքներին և մանավանդ հայերի կողմից ցույց տրված ռազմական աջակցությանը: Այնուամենայնիվ, որոշակիորեն ապահովված էր բնակչության անվտանգությունը, սանձված էին Ղարաբաղը նվաճելու, հայերին ոչնչացնելու օսմանյան Թուրքիայի ծրագրերը: Նպաստավոր պայմաններ էին ստեղծված տնտեսության ու կրթամշակութային կյանքի զարգացման համար: Ռուսաստանի միջոցով Ղարաբաղը, իսկ 1828 թվականից՝ ամբողջ Արևելյան Հայաստանը ներքաշված էր եվրոպական քաղաքակրթության զարգացման հունի մեջ: Բոլորովին այլ էր հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում՝ ենթակա ամենայն բռնության ու հալածանքի, ազգային ու կրոնական ճնշման: Այդ պատճառով հայ ազատագրական միտքը և Հայաստանի պետական անկախության վերականգման գաղափարը սկսեցին կապվել հիմնականում Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության հետ:

20 -րդ դ. սկզբներից Ռուսական կայսրության տարածքում ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոնե-րի ընտրությունների կապակցությամբ բազմազգ Անդրկովկասը կանգնում է լուրջ խոչընդոտի առաջ: Ի՞նչ սկզբունքով առաջնորդվել զեմստվոների ընտրություններն անցկացնելիս, ի՞նչ սահմաններում: Այս կապացությամբ տեղի ունեցան

[1] Ե. Լալայան, նշվ.աշխ., էջ 254 - 255:

վեճեր: Քննարկման հիմնական խնդիրը Անդրկովկասի վարչական վերաբաժանումն էր: Պարզվեց, որ «Անդրկովկասի վարչական բաժանումն այնպիսի հակահայ ուժով է կատարվել, որ բոլոր 55 ուեզդներից ու օկրուգներից միայն 5 -ում են գերակշռում հայերը»[1], չնայած բնակչության թվի մեջ շուրջ 30 % բաժինն ունեին: Սակայն դրանում ամենևին առկա չէր ցարական իշխանությունների բարյացակամությունը մյուս ժողովուրդների նկատմամբ: Իրական պատճառը հետևյալն էր: Բնակչության թվի մեջ մեկ երրորդը կազմող մահմեդա-կանները՝ թաթարները, թաթերը, քրդերը, պարսիկները, թուրքերը և այլն, որոնք բոլորը ընդհանուր անունով կոչվում էին թաթար կամ ուղղակի մահմեդական, իրենց տնտեսական, մանավանդ քաղաքական ու կրթամշակութային ցածր մակարդակով քաղաքական վտանգ չէին ներկայացնում կայսրության համար: Նույնը կարելի է ասել քարթվելական ժողովուրդների մասին, որոնք հաճախ ընդհանուր անվամբ կոչվում էին վրացիներ և կազմում էին բնակչության մոտ քառորդ մասը:

Ուշագրավ է ռուսական պաշտոնական շրջաններում կովկասյան ժողովուրդների մասին գոյություն ունեցող կարծիքը, որն իր հերթին կարևոր նշանակություն ուներ այդ ժողովուրդների նկատմամբ որոշակի քաղաքականություն իրականացնելու գործում: Վրացական ժողովուրդները, ըստ անցյալ դարի աղբյուրների, «ապրում են լիակատար փակ ու կիսակուլտուրական կյանքով... Մտավոր մակարդակն ամենևին բարձր չէ ու համարյա ոչ մի դեր չեն կատարում Կովկասյան երկրամասի տնտեսական կյանքում»: Կովկասյան թաթարները, որոնց միայն մի մասն էր նստակյաց, մյուսները քոչվորական կամ կիսաքոչվորական կյանք էին վարում, նույն աղբյուրների կողմից գնահատվում էին այսպես.

[1] А. Шахатунян, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с.164.

«Ադրբեջանական (Ատրպատկանի, азербайджанские) թաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի, որի պատճառով չարիք են հանդիսանում նստակյաց բնակչության համար... Նկատելի չափով մեղմ են միայն նրանց բարքերը, ովքեր նստակյաց են և կրում են պարսկական ազդեցության ուժեղ հետքերը»[1]:

Միանգամայն այլ են հայերին տրված գնահատականները. «Հայերը դրսևորում են մեծ հակվածություն եվրոպական կրթության և առևտրով ու արդյունաբերությամբ զբաղվելու նկատմամբ: Ազգային զգացումը նրանց մոտ չափազանց ուժեղ է զարգացած: Իրենց ձեռներեցության և առևտրի նկատմամբ հակվածության շնորհիվ քաղաքաբնակ հայերը իրենց մենաշնորհն են դարձրել համարյա ամբողջ առևտուրն ու արդյունաբերությունը Կովկասյան երկրամասում, որի բնակչության զգալի մասը (հատկապես վրացիները) գտնվում են նրանցից լրիվ տնտեսական կախվածության մեջ»[2]: Կարծում ենք՝ հենց դա էր կազմում ցարական Ռուսաստանի ազգային խտրական քաղաքականության հիմքը: «Ժողովուրդների բանտ» համարվող վիթխարի կայսրության մեջ ամենավտանգավոր տարրը նրանք էին, ովքեր տնտեսապես հզոր էին ու նախաձեռնող և «ազգային զգացումը չափազանց ուժեղ է զարգացած», որովհետև առաջին հերթին հենց նրանք կարող էին ազգային անկախ պետականության, ուրեմն և կայսրության կազմից դուրս գալու հակում ունենալ: Նաև այդ է պատճառը, որ ըստ ամենայնի խրախուսվում ու բորբոքվում էր տնտեսապես թույլ ու

[1] Энциклопедический словарь, т.XIIIA, С.Петербург, 1894, сс. 837 - 838.

[2] Նույն տեղում, էջ 838, մանրամասն թվական տվյալներն ըստ ազգությունների՝ նույն տեղում, էջ 837:

քաղաքականապես հետամնաց ուժերի թշնամանքը մյուսների նկատմամբ: Այդ հողի վրա Կովկասյան երկրամասում, այդ թվում և Ելիսավետպոլի նահանգում, 1905 թ. ծայր առան հայ-թաթարական արյունալի ընդհարումներ: Գոյություն ունեցող վարչական սահմաններն այդպիսի ընդհարումներին նպաստում էին, որովհետև վարչական միավորների մեծ մասում հայերը մահմեդականներին զիջում էին բնակչության թվով, և պաշտոնների մեծ մասը գտնվում էր վերջիններիս ձեռքում:

Կովկասի փոխարքա նշանակված Ի. Վորոնցով-Դաշկովն առաջին իսկ քայլերից նկատում է, որ անարդար վարչական բաժանումների հետևանքով հայերը գտնվում են աննպաստ վիճակում, տեղական իշխանությունների մեջ թաթարական բնակչության ներկայացուցիչներն ավելի շատ ու ազդեցիկ դիրքում են գտնվում և գործում են ընդդեմ հայերի: Փոխարքան այդ մասին 1906 թ. տեղյակ է պահում կայսր Նիկոլայ Երկրորդին, հիշեցնում հայերի կատարած կարևոր դերը Ռուսաստանի համար, մանավանդ ռուսական զորքի՝ դեպի Թուրքիա շարժվելու ժամանակ: Փոխարքան գրում է, որ հակահայ կրքերը տեղական իշխանությունների կողմից անարդար կերպով այն աստիճան են բորբոքվել, որ «ամեն ահաբեկչություն ու խլրտում վերագրվում է հայերին, նույնիսկ այնտեղ, որտեղ հայ չկա»[1]:

Վորոնցով-Դաշկովը երկրամասի արդյունավետ կառավարման, ինչպես նաև հայ-թաթարական ընդհարումներից խուսափելու համար, առաջարկում է Անդրկովկասում վարչական սահմանները փոփոխել, այդ թվում՝ Ելիսավետպոլի խոշոր նահանգը բաժանել երկու գեներալ-նահանգապետության՝ Շուշի և Ելիսավետպոլ

[1] Ի. Վորոնցով-Դաշկովի ամբողջ զեկուցագրի թարգմանությունը և շոշափվող հարցի քննությունը տես՝ Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ.2, Վենետիկ, 1921, էջ 367 - 370:

վարչական կենտրոններով: Առաջինը պետք է ներառեր գլխավորապես հայերով բնակեցված ամբողջ լեռնային շրջանները, երբեմնի Ուտիք-Արցախ հայաշխարհը, ներառյալ Ելիսավետպոլ քաղաքի հայկական մասը՝ Գանձակը, որը մյուսից բաժանված էր համանուն գետակով (և ուներ մոտ 20 հազար հայ բնակչություն, իսկ մյուս կողմը՝ 40 հազար խառը բնակչություն): Երկրորդը պետք է ընդգրկեր Կուր գետի ձախափնյա բոլոր գավառները և աջափնյա հարթավայրային շրջանները, որտեղ բնակչության գերակշռող մասը մահմեդականներ էին: Այդպիսի բաժանումը կհամապատասխաներ բնակլիմայական, ազգագրական ու տնտեսական պայմաններին, բնակչության հիմնական զբաղմունքներին, կվերանային հայ-թաթարական ընդհարումների առիթները, և ընդհանուր առմամբ շահեկան կլիներ կառավարումը:

Առաջարկված նախագծին դեմ էին վրաց-թաթարական ուժերը, որոնց ազգային շահերի տեսանկյունից գոյություն ունեցող սահմանները ձեռնտու էին, և նրանք համատեղ տրամադրում էին վերին իշխանություններին՝ ընդդեմ հայերի. փոխարքայի առաջարկը մերժվեց: Չնայած դրան, պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջաններում, Ելիսավետպոլի նահանգի լեռնային շրջանները Ղազախի ու Շամքորի կողմերից սկսած մինչև Արաքսի ափը շարունակվում էին ճանաչվել որպես Ղարաբաղ[1], համախմբված ապրող հայ բնակչությամբ: Այդ քննարկումների կապակցությամբ գործածական դարձան, ինչպես նշել ենք, Գանձակի լեռնային շրջաններ, Լեռնային Գանձակ հասկացությունները, որոնք հետագայում քաղաքական խեղաթյուրման ենթարկվեցին՝ դառնալով Լեռնային Ղարաբաղ:

Վարչական սահմանների վերագծման հարցը բարձրացվել ու քննարկվել է նաև 1909, 1913, 1917 թթ.,

[1] Энциклопедический словарь, т.I, С.Петербург, 1890, с.413.

սակայն՝ ապարդյուն: Ղարաբաղի (ինչպես և կայսրության մյուս շրջանների) վիճակը բարդացավ 1917 թ. Ռուսաստանում միապետության տապալումից հետո: Երկրի ժամանակավոր կառավարությունը տեղերում կառավարման ժամանակավոր մարմիններ ստեղծեց: Վերացվեց Կովկասի փոխարքայությունը և ստեղծվեց Անդրկովկասի հատուկ կոմիտե՝ Օզակոմ: Բազմազգ ու հետամնաց կայսրության մեջ կուտակված բոլոր հակասությունները հրապարակ ելան ու բորբոքվեցին քաղաքական տարբեր ուժերի կողմից: Դրան գումարվում էր այն, որ երկիրը գտնվում էր պատերազմի մեջ (Առաջին համաշխարհային): Բոլշևիկյան կուսակցությունը բարոզչություն էր ծավալել՝ պատերազմին վերջ տալու նպատակով. զինվորներին կոչ էին անում թողնել ռազմաճակատը, վերադառնալ իրենց տները: Ռազմաճակատը տարերայնորեն քայքայվում էր: Ժամանակավոր կառավարությունն անկարող գտնվեց վերահսկելու, կառավարելու երկրի ներքին ու արտաքին կյանքը: Հենց դրան էլ ձգտում էին բոլշևիկները՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու համար:

Հրատապ դարձավ հայերի ինքնապաշտպանության խնդիրը, որն ամենևին չէր մտահոգում ոչ Օզակոմին, ոչ նրան փոխարինած (1917 թ. նոյեմբերին) Սեյմին: Տեղական իշխանության այդ մարմիններում վրացիները գործում էին մահմեդականների հետ դաշնակցած, ըստ ամենայնի խրախուսվելով ու աջակցություն ստանալով Թուրքիայի կողմից՝ ընդդեմ ռուսական շահերի և հույս փայփայելով՝ տեր դառնալու հայկական հողերին: Ահա թե ինչու երբ հայերը նորից հարց բարձրացրին վարչական տարածքները վերաբաժանելու մասին, հանդիպեցին վրաց-մահմեդական համատեղ դիմադրությանը: Օգտվելով այն բանից, որ Ժամանակավոր կառավարությունը որոշ տեղերում փոփոխության է ենթարկել նախկին վարչական սահմանները, հայերը պահանջում են վերագծել Անդրկովկասի վարչական

սահմանները[1], այդ թվում՝ Ելիսավետպոլի նահանգի ամբողջ լեռնային գոտին, սկսած Ղազախի ու Շամխորի կողմերից մինչև Արաքսի ափը, որտեղ գերակշռում է հայ բնակչությունը՝ առանձնանալով տնտեսական, բնակլիմայական, պատմական այլևայլ պայմաններով, դարձնել վարչական առանձին միավոր: Օզակոմն ստեղծեց Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների 5-ական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր հարցը, մշակեր նախագիծ, սակայն այդպես էլ բոլորի համար ընդունելի տարբերակ չգտնվեց, որովհետև նախկին գավառային ու նահանգային սահմանները ձեռնտու էին վրացիներին ու մահմեդականներին, որոնք արդեն հույս ունեին Թուրքիայի, Անգլիայի, Գերմանիայի օգնությամբ այդ շահեկան սահմանների մեջ իրենց անկախ պետություններն ստեղծելու:

Հայերին մնում էր ապավինել սեփական ուժերին, կազմակերպել ինքնապաշտպանություն՝ թուրքական ագրեսիայից ու նրանց կողմից հրահրվող տեղական մահմեդական ուժերից պաշտպանվելու համար: Արդեն 1917 թ. մահմեդական բնակավայրերում սկսում են հայտնվել թուրքական գործակալներ, որոնք հրահրում են հավատակիցներին՝ կռվելու ընդդեմ հայերի ու ռուսների: Երբեմնի վիթխարի կայսրության բոլոր կողմերում իրավիճակն ավելի սրվեց, երբ 1917 թ. հոկտեմբերին բոլշևիկներն իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Կազմալուծվեց տնտեսությունը, խաթարվեց կապը երկրի առանձին շրջանների միջև: Ռուսական զորքն սկսեց հեռանալ Կովկասյան ռազմաճակատից՝ հայ ժողովրդին թողնելով մենմենակ՝ առաջ շարժվող թուրքական զորքերի դեմ: Հայերի բոլոր ջանքերը Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ուժերի հետ միացյալ երկրամասը կառավարելու ուղղությամբ՝

[1] Ս. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.3, Եր.,1978, էջ 270:

ապարդյուն անցան. անունով միայն կոչվելով Անդրկովկասյան, իրականում թե՛ Օզակոմը, թե՛ Սեյմը պառակտված էին հակադիր ուժերի:

Իրադարձությունների այդպիսի ընթացքը Ղարաբաղի հայությանն ստիպում է խաղաղություն պահպանելու համար առավելագույնս օգտագործել քաղաքական բոլոր միջոցները: Կարևոր դեր են կատարում ինքնակազմակերպման ու ինքնակառավարման ավանդույթները: Բոլոր գյուղերն ունեին հասարակական վճիռ կայացնելու մշակված կարգ, ընդհանուր խնդիրը համատեղ լուծելու ժողովատեղ: Անհրաժեշտության դեպքում, ըստ մշակված կարգի, ընտրվում էին պատվիրակներ, ուղարկվում Շուշի՝ ժողով-հավաքների, որոնք իրենց հերթին ընտրում էին Ղարաբաղի ինքնակառավարման մարմիններ: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Շուշիում հրավիրվեց Ղարաբաղի բոլոր կուսակցությունների ու քաղաքական հոսանքների խորհրդակցություն: Ընտրվեց միջկուսակցական բյուրո, որը ստեղծված փաստական անիշխանության պայմաններում իր ձեռքը վերցրեց լեռնաշխարհի կառավարումը: Նշենք, որ բյուրոն էլ իր հերթին ընտրեց իր ղեկավար մարմինը՝ դիվանը (նախագահ՝ Հայրապետ Մուսայելյան): Պատմական ավանդույթների հիման վրա, ժողովրդավարության սկզբունքով կատարվեցին քայլեր, որոնք կարող են արժևորվել իբրև Անդրկովկասում ազգային հանրապետությունների ձևավորման ուղղությամբ առաջին քայլեր: Ձևավորված կառույցները և նրանց կատարած գործառույթները թույլ են տալիս այդ ամենը գնահատել որպես առաջին ազգային պետական կազմավորում Հարավային Կովկասում:

Միջկուսակցական բյուրոյի կազմի մեջ մտնում էին ներկայացուցիչներ բոլոր կուսակցություններից ու հոսանքներից, որոնք արտացոլում էին հասարակության բոլոր խավերի արմատական շահերը: Բյուրոն բաղկացած էր 14 հոգուց՝ 5 դաշնակցական, 3 մենշևիկ, 3 էսեռ, 3 բոլշևիկ:

Այս Բյուրոն հետագայում կոչվեց նաև Խորհուրդ, իսկ անդամները՝ կոմիսարներ: Նախագահ ընտրվեց Հայրապետ Մուսայելյանը: Խորհուրդը գործադիր մարմին էր, ուներ գործունեության որոշակի ծրագիր.

1. ամեն գնով պաշտպանել հայ և թաթար ժողովուրդների ամերաշխությունը,
2. վերջ դնել քաղաքում և շրջաններում տիրող անիշխանությանը,
3. սերտ կապեր ստեղծել քաղաքի թաթար ղեկավարության հետ, ծագած վեճերը լուծել հայ և թաթար ներկայացուցիչներից բաղկացած ազգամիջյան կոմիտեի միջոցով:

Միջկուսակցական Բյուրոն կարևորում էր ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրները: Բնակչությունը նախապատրաստվում էր, հնարավորինս զինվում, ստեղծվում էին ինքնապաշտպանության ջոկատներ: Աշխատանքները ղեկավարում էր Բյուրոյի ռազմական գործերի կոմիսար Հ. Թումյանը: Անիշխանությանը վերջ դնելու նպատակով ստեղծվեց տրիբունալ, որը կարճ ժամանակամիջոցում որոշ արդյունքների հասավ:

Խորապես գիտակցելով Թուրքիայի և թուրք-թաթար բնակչության կողմից սպառնացող վտանգի մեծությունը, առճակատումից խուսափելու, խաղաղություն պահպանելու նպատակով, Ղարաբաղի միջկուսակցական Բյուրոյի առաջարկությամբ ստեղծվեց ազգամիջյան կոմիտե, որի կազմում՝ 6 հայ էին, 6 թաթար՝ Մուսուլմանական ազգային խորհրդի կողմից: Նախագահ է ընտրվում Շուշիի նախկին դատավոր Իոսիֆ Կոբիևը: Այս կոմիտեին հաջողվում է մի որոշ ժամանակ խափանել ընդհարումները, սանձել ավազակային հարձակումները, պատժել մեղավորներին: Սակայն դեպքերը զարգանում էին սրընթաց, իրադրությունը փոխվում էր շատ արագ:

Իր կազմավորման պահին Կոմիսարների խորհուրդը որոշում էր ընդունել նախապատրաստելու և հրավիրելու Ղարաբաղի հայության համագումար, որը լինելու էր երկրամասի՝ ընտրությունների ճանապարհով ստեղծված օրենսդիր մարմինը: Ինքը՝ Կոմիսարների խորհուրդը, գործում էր ժամանակավոր և իրեն այդպես էր անվանում մինչև համագումարի հրավիրելը: Միջկուսակցական խորհուրդը Անդրկովկասի տարածքում անդրանիկ պետական կազմավորման՝ ինքնիշխան Ղարաբաղի գործադիր մարմինն էր: Միջկուսակցական Բյուրոն իր կառուցվածքով ու դերակատարումով փաստորեն իրականացնում էր պետությանը բնորոշ հիմնական գործառույթները:

Կոմիսարների խորհուրդը համաձայն իր որոշման՝ 1918 թ. հուլիսի 22 -ին հրավիրեց Ղարաբաղի հայոց առաջին համագումարը: Համագումարին մասնակցում էին 180 ընտրված պատգամավոր՝ երկրամասի բոլոր գյուղերից, ինչպես նաև Շուշվա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարը ընթացել է Շուշվա Թեմական դպրոցի շենքում[1]:

Համագումարը լսում է Կոմիսարների խորհրդի հաշվետու զեկուցումը: Այնուհետև միակամ արտահայտում է իր դիրքորոշումը՝ Ղարաբաղի կարգավիճակի նկատմամբ, հայտարարելով Ազատ Ղարաբաղը՝ Ազատ Ռուսաստանի սահմաններում[2], որից հետո համագումարն ընտրում է Ազատ Ղարաբաղի ինքնիշխան գործադիր մարմին՝ կառավարություն, որը կոչվում է Ժողովրդական: Ժողովրդական կառավարությունը կոալիցիոն էր. 8 անդամներից 4 -ը դաշնակցական էին, 2 մենշևիկ, 1 էսեռ, 1 անկուսակցական: Կառավարությունը բաղկացած էր 8 բաժիններից, որոնց

[1] ՀԱԱ, ֆ.314, g.1, գ. 34, թթ. 50 - 53:
[2] Նույն տեղում, թ. 58:

ղեկավարները կոչվում էին վարիչներ. ներքին գործերի և արտաքին գործերի բաժին (վարիչ՝ Եղիշե Իշխանյան), զինվորական գործերի (վարիչ՝ Հարություն Թումյան), հաղորդակցության (վարիչ՝ Մարտիրոս Այվազյան), պարենավորման (վարիչ՝ Արսեն Հովհաննիսյան), ֆինանսական (վարիչ՝ Մովսես Տեր-Աստվածատրյան), հողային գործերի և արդարադատության գործերի (վարիչ՝ Արշավիր Քամալյան): Կառավարության նախագահ է ընտրվում Եղիշե Իշխանյանը, քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը[1]:

Կառավարության որոշմամբ բացի բաժինները կազմվում են հետևյալ հանձնաժողովները. պարենավորման, ֆինանսական, վարչա-իրավական, բժշկա-սանիտարական: Կառավարությունն ուներ իր պաշտոնաթերթը՝ «Ղարաբաղի սուրհանդակ» անվամբ, որի միակ համարը լույս տեսավ 1918 թ. օգոստոսի 19-ին: Պաշտոնաթերթում տպագրվեց Ազատ Ղարաբաղի Ժողովրդական կառավարության հայտարարագիրը (դեկլարացիան), որի ծրագրի էությունն էր. «Պայքարել անիշխանության ու ճնշումների դեմ, չեզոքացնել հանցագործ տարրերին, արդարացի լուծել վիճելի խնդիրները, պաշտպանել ճնշվողներին ու կեղեքվողներին, վերացնել ինքնադատաստան գործողությունները, բեկական բռնագրավված հողերը կարգավորել, աշխատել պարենավորման գործը կազմակերպել ու հայ և թուրք ժողովուրդների մեջ համերաշխություն հաստատել»[2]:

Ժողովրդական կառավարությունը ձեռնամուխ եղավ իր գործառույթների իրագործմանը: Նա նախ և առաջ մտահոգված էր ժողովրդի ֆիզիկական պաշտպանությունն ապահովելու խնդրով: Տեղերում նշանակվեցին գավառական ու գյուղական կոմիսարներ, վերանորոգվեցին ու կարգի

[1] ՀԱԱ, ֆ.314, ց.1, գ. 34, թ. 52:
[2] Նույն տեղում, թ. 55:

բերվեցին հին զենքերը, միջոցներ էին հայթայթվում նորի ձեռք բերման ուղղությամբ (տեղերում կային հմուտ զինագործներ, որոնք կարողանում էին նոր զենքեր պատրաստել): Աշխատանքները ղեկավարում էր Հ. Թումյանը: Շուշիում և մերձակա բնակավայրերում մտցվեց պարետային ժամ (պարետ նշանակվեց ռուսական բանակի սպա Արտաշես Վարդապետյանը), հնարավորինս կարգի բերվեց արդեն կազմալուծված դատական համակարգը, տեղերում ստեղծվեցին հաշտարար դատարաններ, իսկ քաղաքում՝ շրջանային դատարան, ստեղծվեց նաև հատուկ գործերի քննիչ հանձնաժողով, գյուղական համայնքներում սկսեցին քննարկել ու լուծել վիճահարույց հողային խնդիրները և այլն: Կարելի է ասել, որ Ժողովրդական կառավարությունը հասավ որոշ դրական արդյունքների:

Ղարաբաղի Ժողովրդական կառավարության իրավասությունը տարածվում էր ողջ Ղարաբաղի՝ Խամսայի պատմական հինգ մելիքությունների և Գանձակի գավառի հայկական լեռնային գյուղերի վրա*: Ղարաբաղի այդ նորաստեղծ պետության վերաբերյալ նշենք այսպիսի ուշագրավ մի փաստ: 1918 թ. սեպտեմբերի սկզբներին թուրքական կանոնավոր բանակի զորամասերը հայտնվեցին Ղարաբաղի սահմաններում: Թուրքական հրամանատարությունը Ադրբեջանին հպատակվելու և զինաթափ լինելու պահանջներով վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի Ժողովրդական կառավարությանը: Ի՞նչ է դա նշանակում, այն որ թուրքական կողմը փաստորեն ճանաչում է Ղարաբաղի անկախությունն ու Ժողովրդական կառավարության իրավունքները՝ իբրև երկրամասի գործադիր իշխանություն:

Ղարաբաղի հայության 2-րդ համագումարը (1918 թ. սեպտեմբեր) Ժողովրդական կառավարությունը վերանվանեց Ազգային խորհուրդ, թեև գործառույթների առումով այն մնաց

* *Ընդգծումը մերն է:*

անփոփոխ և որոշ ժամանակ երկու անվանումն էլ գործածական էին: Իսկ գերագույն օրենսդիր մարմինը ներկայացնում էր Ղարաբաղի հայոց համագումարը, որը պարբերաբար տեղի էր ունենում ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը երկրամասում (կայացել է 10 համագումար):

1918 - 1920 թթ. Ղարաբաղը կրկին հայտնվում է խոշոր տերությունների շահերի բախման հանգույցում: Ադրբեջանն ամեն ջանք գործադրում էր նախկին Ելիսավետպոլի նահանգի ամբողջ տարածքին, այդ թվում և Ղարաբաղին տիրելու համար: Բաքվում տեղակայված դաշնակից Մեծ տերությունների զորքերի հրամանատարությունը, մասնավորապես անգլիացիների, 1918 թ. դեկտեմբերի սկզբին իրենց ներկայացուցչությունն էին հիմնել Շուշիում և հանուն Բաքվի նավթի, մանավանդ ռուսներին Կովկասից դուրս մղելու նպատակով, բոլոր հարցերում պաշտպանում էին Ադրբեջանի հավակնությունները, փորձում համոզել, ստիպել ռուսամետ հայերին՝ ժամանակավորապես հպատակվելու Ադրբեջանին, մինչև որ Փարիզի Խաղաղարար միջազգային կոնֆերանսը լուծի տարածաշրջանի սահմանների հարցը: Այնուամենայնիվ, Ղարաբաղը չի հպատակվում:

1920 թ. մարտին ադրբեջանական ուժերը Շուշիում հայերի կոտորած են կազմակերպում, որին զոհ են դառնում տասնյակ հազարավոր հայեր, հայկական թաղամասը մոխրակույտի է վերածվում, սակայն լեռնաշխարհը շարունակում է ինքնապաշտպանությունը:

1920 թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի միջոցով Բաքվում հաստատվեց բոլշևիկյան խորհրդային իշխանություն, որը սկսեց տարածել նոր կարգերը Ադրբեջանի բոլոր բնակավայրերում: Ադրբեջանի բոլշևիկյան ղեկավարությունն այժմ էլ ամեն կերպ փորձում էր ռուսական խորհրդային 11-րդ բանակի միջոցով տեր դառնալ հայկական տարածքներին, չարաշահելով այն

հանգամանքը, որ Հայաստանը խորհրդային չէ, և Ռուսաստանը ձգտում էր հայ բոլշևիկների վրա հենվելով 11-րդ բանակի ուժով այնտեղ նույնպես նոր կարգեր հաստատել: Հայտնվելով նոր վտանգի առջև, Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը կամովին իր իշխանությունը հանձնեց տեղի բոլշևիկներին՝ լեռնաշխարհը հռչակելով խորհրդային, որպեսզի գոնե այդ կերպ պաշտպանվեր Ադրբեջանի հավակնություններից:

Ռուսաստանի արտգործնախարար Գ. Չիչերինն այդ օրերին իր զարմանքն ու զայրույթն է հայտնում մոսկովյան իշխանություններին Բաքվի՝ բոլշևիկ հռչակված ադրբեջանական ղեկավարների գործելակերպի վերաբերյալ, որոնք ամեն կերպ ջանում են ռուս բոլշևիկյան զենքի միջոցով տեր դառնալ հայկական հողերին: Նա հեռագրում է Մոսկվա, որ «<u>այդ տարածքների միացումն Ադրբեջանին միանգամայն անհնարին կդարձնի համաձայնությունը Հայաստանի հետ</u>*»[1]: Ստեղծված ծանր վիճակում 1918 - 1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը կարողանում էր պաշտպանել իր «եզրային շրջանները, որոնց նկատմամբ վճռական առարկություններ են հարուցանում հարևան պետությունները»[2]: 1920 թ. մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետության ընդունած օրենքը և այլ փաստաթղթեր վկայում են, որ Ղարաբաղն ամբողջությամբ (ներառյալ Գանձակի լեռնային՝ հայկական շրջանները) մտել են ՀՀ-ի կազմի մեջ, կառավարվել, ֆինանսավորվել ու պաշտպանվել Հայաստանի Հանրապետության կողմից: Կարելի է ասել, որ Ղարաբաղը հանդիսացել է ինքնավար միավոր՝ Հանրապետության

---

* *Ընդգծումը մերն է:*

[1] Հայաստանի հանրապետությունը 1918 - 1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 212, № 180:

[2] ՀԱԱ, ֆ.56, ց.1, գգ. 10224, 10294, 10340, 10341, 10371, 10414, 10424, 10575 և այլն:

կազմում՝ հնագույն ժամանակներին բնորոշ պետական կառուցվածքին համապատասխան:

Խորհրդային Ադրբեջանի ու 11-րդ Կարմիր բանակի ղեկավարության՝ պահպանված գրությունները վկայում են, որ ընդհուպ մինչև 1920 թ. օգոստոսի 3-ը երբեմնի Ելիսավետպոլի նահանգի լեռնային ամբողջ շրջանները,. Ղազախի, Շամխորի բնակավայրերը, Զարդախլուի ու Գետաբեկի գյուղախմբերով դեպի հարավ, մինչև Արաքս գետը, գտնվել են հայկական իշխանության ներքո: Ադրբեջանի ղեկավարությունը ռուս հրամանատարությանը համոզում է, որ ռուս զինվորների ուղեկցությամբ հայ բոլշևիկներ ուղարկվեն Զարդախլու, Գետաբեկ և այլ վայրեր, զինաթափեն հայերին, ոտքի հանեն հայ գյուղացիությանը՝ ընդդեմ հայկական ազգային իշխանությունների, որոնց իրավասության ներքո գտնվում էին այդ գյուղերը[1]:

Խորհրդային Ադրբեջանի վարած հակահայ, հակաղարաբաղյան քաղաքականության համար բնութագրական է Բաքվի կողմից Ղարաբաղի նահանգային հեղափոխական կոմիտեի նախագահ նշանակված Ա. Կարաևի 1920 թ. հուլիսի գրությունը՝ ուղղված տեղական բոլշևիկ գործիչներին. «Մենք գիտենք, որ մեր զորքերը ջախջախվել են ու նահանջել, բայց այսօր զորքի փոխարեն մեր փողերն են հրաշքներ կատարում, - գրում է նա ու պահանջում: - Մի կողմ թողեք մարդասիրությունը, դրանով չի կարելի պետություն ստեղծել, երկրներ նվաճել: Կռվողներով հարուստ նշանավոր տեղերում, հայերին թուլացնելու նպատակով, սպանեցեք մի ռուս զինվորի և մեղադրեք հայերին: Գիտե՞ք ինչ կանեն նրանց ռուսները*»[1]: Այդպես գործել և շարունակում է գործել

[1] Интернациональная помощь XI армии в борьбе за победу советской власти в Азербайджане, Баку, 1989, с.24.

* *Ընդգծումը մերն է:*

Ադրբեջանը: Կարծում ենք, զարմանք չպիտի պատճառի, որ ռուս-թուրքական 1921 թ. պայմանագրով և ՌԿԿ Կովբյուրոյի ապօրինի որոշումով Ղարաբաղը Հայաստանից պոկվել և ինքնավարության իրավունքով բռնակցվել է Ադրբեջանին (ինչպես նաև Նախիջևանը): Կասկած չի հարուցում, թե ինչ ճանապարհով կլինի դա իրականացված:

Եվ դա այն պարագայում, երբ Խորհրդային Հայաստանի Կոմիսարների՝ ժողկոմների խորհուրդը Ա. Մյասնիկյանի նախագահությամբ 1921 թ. հունիսի 12-ին հռչակագիր էր ընդունել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ. «Ադրբեջանի Սոցիալիստական հանրապետության Հեղկոմի հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային հանրապետությունների եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը»[2]:

Շուրջ երկու տարի (1921 - 1923 թթ.) Ադրբեջանն ամեն բռնության ու կեղծիքի դիմեց, որպեսզի Ղարաբաղին ինքնավարություն չտրվի: Խեղաթյուրվեցին հողաչափության ու մարդահամարի արդյունքները, կեղծ փաստաթղթեր կազմվեցին, թե իբր Ղարաբաղի ժողովուրդը ինքնավարություն չի ուզում, ձգձգվեց վերադաս բոլշևիկյան մարմինների հրահանգների կատարումը է այլն[3]: Այնուամենայնիվ, Ղարաբաղը կարողացավ պահպանել իր պետականությունը ինքնավար մարզի կարգավիճակով՝ Ինքնավար Լեռնային Ղարաբաղ ապա՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ: 1923 թ., սակայն, մարզի սահմանները գծվեցին այնպես, որ մարզից դուրս մնացին Խամսայի հինգ հանրահայտ

[1] Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988, с.24, Нагорный Карабах в 1918 - 1923 гг., Ереван, 1992, с.542 № 388.

[2] ՀԱԱ, ֆ.113, ց.3, գ.56, թ.31, ֆ.1022, ց.2, գ.197, թ.2, տպար. օրին.:

[3] Բ. Ուլուբաբյան, նշվ.աշխ., էջ 344 - 350:

մելիքություններից՝ Գյուլիստանի տարածքը, Գանձակի լեռնային շրջանները, Արաքսի ձախափնյա տարածքը, Հայաստանի հետ ընդհանուր սահմանային շրջանները: Ինքնավարությունն ստեղծվեց ըստ էության ոչ թե ամբողջ Լեռնային Ղարաբաղում, այլ նրա միայն կենտրոնական մի փոքր շրջանում, անջրպետված Հայաս-տանից, ամբողջությամբ կղզիացած Ադրբեջանի կազմի մեջ, զրկված կենսապահովման ինքնուրույն հնարավորություն-ներից (ճանապարհների, ջրի, կապի, մատակարարման, հումքի մշակման, այլևայլ հարցերում): Ուշագրավ է, որ խեղված սահմաններով մարզի հռչակումից հետո երկար ժամանակ Ադրբեջանն անհանգստանում էր, որ ինքնավա-րության պահանջ կարող են բարձրացնել Գանձակի լեռնային մյուս հայկական շրջանները[1]:

Այնուամենայնիվ, նույնիսկ աղճատված ինքնավարությամբ, Ղարաբաղն ինքն իրեն գիտակցում էր որպես ինքնուրույն պետություն և գործում էր ժողովրդավարության այնպիսի սկզբունքներով, որոնք ոչ միայն Ադրբեջանում, այլև ամբողջ Խորհրդային Միությունում բացառիկ երևույթ էին: ԼՂԻՄ -ում պետական լեզուներ էին միայն հայերենն ու ռուսերենը: Տեղական պաշտոնական ոչ մի փաստաթղթի մեջ երկար տարիներ նույնիսկ չէր նշվում Ադրբեջանը որպես վերադաս պետություն: ԼՂԻՄ -ի իշխանությունը «իր երկրի ներսում» հավասարապես պաշտպանում էր ազգային փոքրամասնությունների շահերը՝ այն դիտելով որպես իր քաղաքական կարևոր խնդիրներից մեկը»[2]:

ԼՂԻՄ -ի սահմաններից դուրս թողնված և անմիջականորեն Ադրբեջանին ենթարկված ղարաբաղյան հայկական

[1] Բ. Ուլուբաբյան, նշվ.աշխ., էջ 251:
[2] Շահեն, Ազգային փոքրամասնության խնդիրը Լեռնային Ղարաբաղում, «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, Ստեփանակերտ, 1927, օգոստոսի 10:

գյուղախմբերը (հետագայում դարձած Շահումյանի, Խանլարի, Գետաբեկի, Շամխորի, Դաշքեսանի՝ հայկական Քարհատի և այլ շրջաններ) տասնամյակներ շարունակ ջանքեր թափեցին՝ մտնելու ԼՂԻՄ -ի կազմի մեջ, բայց չհաջողվեց: Ադրբեջանը ճնշում էր այդ ձգտումները: Այդպիսի պահանջ ներկայացնողները հալածվում ու պատրժվում էին՝ իբրև ազգայնամոլներ: Հայաստանից ու ԼՂԻՄ -ից դուրս թողնված հայության այդ ստվար հատվածի նկատմամբ Ադրբեջանը հետևողականորեն գործադրում էր հայրենի հողերից դուրս մղելու քաղաքականություն: Դրա հետևանքով հազարավոր հայեր հեռացան, խոշոր գաղթօջախներ կազմելով Միջին Ասիայում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Այնուամենայնիվ, Ադրբեջանը չկարողացավ հայաթափ անել Ղարաբաղը: Առանձին շրջանների, գյուղախմբերի, թեկուզև առանձին գյուղերի մասշտաբով մարզի կազմից դուրս թողնված հայերը կարողացան պահպանել իրենց ներքին կիսանկախ վիճակը՝ կենսական նպաստավոր միջավայր կազմելով ԼՂԻՄ -ի համար: Ցավոք, ԼՂԻՄ -ը նույնպես ենթարկված էր ազգային խտրականության, հայերին մարզից դուրս մղելու, արհեստականորեն ադրբեջանական բնակչության ներհոսքը ուժեղացնելու քաղաքականության:

1980 -ական թթ. կեսերին ԽՍՀՄ -ում սկիզբ առան երկրի կյանքի ժողովրդավարացման քաղաքական գործընթացներ, որոնք հայտնի են վերակառուցում անունով: Ադրբեջանի ղեկավարությունը թերևս մյուս հանրապետություններից ավելի վաղ դրանց մեջ նկատեց ԽՍՀՄ -ի փլուզման նշաններ և բացահայտ բռնություններ սկսեց ամբողջ պատմական Ղարաբաղը հայաթափ անելու նպատակով: Առաջին զոհը դարձավ հին ու հզոր արմատներ ունեցող Չարդախլու գյուղը, որը մի շարք բռնարարքներից հետո 1987 թ. բացահայտ զինված հարձակման ենթարկվեց ադրբեջանական ոստիկանության 200 հոգանոց ջոկատի կողմից: Դա աննախադեպ երևույթ էր ԽՍՀՄ -ի պատմության մեջ, բայց այն քողարկվեց.

ամիսներ հետո միայն մոսկովյան մամուլը գրեց այդ մասին[1]: Ակնհայտ դարձավ, որ հայերի հետագա գոյությունն Ադրբեջանում անհնարին է: Ցավոք, Խորհրդային Հայաստանի իշխանություններնը ամենևին չպաշտպանեցին հայության դատը: Դեռ ավելին, ամեն կերպ քողարկում էին այդ դաժան իրողությունները: Այնուամենայնիվ, դրանք մեծ ազդեցություն ունեցան ժողովրդի ազգային տրամադրություն-ների վրա: Առաջացավ հայերի համաժողովրդական ընդվզում, ազատագրական շարժում ԼՂԻՄ -ում ու նրանից դուրս թողնված հայկական արցախյան շրջաններում:

1988 թ. փետրվարի 20 -ին ԼՂԻՄ -ի մարզային խորհուրդը որոշում ընդունեց Ադրբեջանի կազմից դուրս գալու, Հայաստանի հետ վերամիավորվելու մասին: ԽՍՀՄ -ի և Ադրբեջանի իշխանությունները մի կողմից ամեն միջոց ձեռնարկեցին շարժումը խեղդելու համար, մյուս կողմից սկսեցին խեղաթյուրել հայերի պահանջը, ինքնորոշման հարցը վերածել սոցիալ-տնտեսականի: Բարելավման ծրագրեր կազմվեցին, կազմակերպվեցին անվերջանալի քննարկումներ, որոնց զուգահեռ արվում էր ամեն ինչ Ադրբեջանը հայաթափելու համար: 1988 թ. փետրվարի վերջերին հայերի ջարդ կազմակերպվեց Սումգայիթում, որը համապատասխան գնահատական չստացավ խորհրդային ղեկավարության կողմից և անուղղակի կերպով խթանեց հայ բնակչության ջարդեր Ադրբեջանի բոլոր կողմերում՝ Բաքվում, Կիրովաբադում, Մինգեչաուրում և այլուր: Ինչպես նկատել է մոսկովյան մամուլը՝ «Սումգայիթի ջարդերին Կրեմլը չտվեց ոչ քաղաքական, ոչ էլ իրավական գնահատական, որի հետևանքով արյունոտ շղթան ձգվեց ամբողջ երկրով մեկ»[2]:

---

[1] А. Беккер, Конфликтная ситуация. У прошлого в плену, газета "Сельская жизнь", Москва, 1987, 24 декабря.

[2] Л. Графова, Ночью выпал первый снег, газета "Комсомольская правда", 1990, 27 сентября.

Միակ դրական քայլը, որ կատարվեց մոսկովյան իշխանությունների կողմից, այն էր, որ ԽՍՀՄ պետական իշխանության բարձրագույն մարմինը Ղարաբաղում ստեղծեց Հատուկ կառավարման կոմիտե: Դրանով մարզը դուրս բերվեց Ադրբեջանի ենթակայությունից, սկսեց կառավարվել Մոսկվայի կողմից: Մեկ տարի հետո Հատուկ կառավարման կոմիտեին փոխարինեց այսպես կոչված Կազմկոմիտեն, բայց խնդրի էությունը դրանով չփոխվեց: Խորհրդային իշխանությունները, որոնք իրենց ձևավորման առաջին տարիներին Ղարաբաղն ապօրինաբար բռնակցել էին Ադրբեջանին, իրենց գոյության վերջին տարիներին Ղարաբաղը դուրս բերեցին Ադրբեջանի կազմից: Դա մի նոր իրավական վիճակ էր Ղարաբաղի պետական ինքնիշխանության պատմության մեջ*: Ադրբեջանը չհաշտվեց այդ վիճակի հետ, շարունակեց նոր թափով բռնություններ՝ Ղարաբաղն իրեն ենթարկելու նպատակով, բայց՝ ապարդյուն:

Հարյուր հազարավոր մարդիկ ջարդի ու կողոպուտի ենթարկվեցին: Տասնյակ ու տասնյակ հին հայկական բնակավայրեր Ադրբեջանում ամայացան: Դառը կերպով, հազարավոր խաղաղ բնակիչների արյան գնով հաստատվում էր դեռևս 19 -րդ դ. վերջերին հայտնի իրավաբան ու դիվանագետ, պրոֆեսոր Ֆ. Մարտենսի հայտնած կարծիքը՝ «դարերի փորձը հաստատում է, որ իսլամն ու քրիստոնեությունը, թուրքերն ու քրիստոնյաները, թուրքական ռեժիմն ու քրիստոնեական համայնքների ազատությունը ոչ մի կերպ չեն կարող հաշտ ապրել»[1]: Հայերը դիմակայեցին միայն ԼՂԻՄ -ում և նրան կից Շահումյանի շրջանում, որոնք ժողովրդի կամքով միավորվեցին: Բոլոր մակարդակների

---

* *Ընդգծումը մերն է:*

[1] F. Martens, Die russische politik in der orientalischen frage, Moskau, 1877, cc. 42 - 43, ըստ՝
Л. А. Камаровский, նշվ.աշխ., էջ 12:

ժողովրդական պատգամավորների միացյալ նիստում 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ): Անկախության համար Ղարաբաղի դարավոր պայքարի պատմության մեջ դա պետականության նոր աստիճան է*, որն ամփոփում է ժողովրդավարության, ազգային-ազատագրական պայքարի դարավոր ձեռքբերումները և հանդիսանում է պետականության զարգացման օրինաչափ ու բարձրագույն աստիճանը՝ առանձին գավառների մելիքություններից, Ղարաբաղի հայկական մարզի ծրագրից, ժողովրդական ինքնակառավարումից և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզից հետո:

ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանը սանձազերծեց բացահայտ պատերազմ՝ խաղաղ բնակչության դեմ գործի դնելով ժամանակակից ռազմական բոլոր միջոցները, ընդհուպ մինչև զանգվածային բնաջնջման զինատեսակներ («Ալազան», «Գրադ»), որոնք արգելված են միջազգային կազմակերպությունների կողմից: 1992 թ. զավթվում է ԼՂՀ-ի տարածքի զգալի մասը, մահմեդական ռազմամոլ ուժերի կողմից հավաքագրվում և ԼՂՀ-ի դեմ կռվելու համար Ադրբեջան են ուղարկվում հազարավոր գործազուրկներ՝ Թուրքիայից, մոջահեդներ՝ Աֆղանստանից, կամավորներ՝ Չեչնիայից, վարձկաններ՝ Ուկրաինայից և ԱՊՀ-ի այլ երկրներից: Զավթիչների ու վարձկանների բանակն, այնուամենայնիվ, խայտառակ պարտություն է կրում ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերից: Ժողովրդավարության ավանդական սկզբունքներով առաջնորդվող երիտասարդ Հանրապետությունը կարողանում է բավարար չափով լուծել նաև ներքին սոցիալ-տնտեսական, կրթամշակութային այլևայլ հարցեր, որոնց շնորհիվ ավելի արդյունավետ են օգտագործվում սուղ միջոցներն արտաքին ճակատում:

* *Ընդգծումը մերն է:*

Ինքնապաշտպանության բանակն ի զորու եղավ Հանրապետության տարածքի հիմնական մասը մաքրել ադրբեջանական ռազմական կազմավորումներից, ազատագրել ԼՂՀ-ի շրջակա հայկական՝ ղարաբաղյան շրջանները, որոնք հայաթափ էին արվել խորհրդային տարիներին: Ստեղծվում է անմիջական կապ Հայաստանի, ինչպես և արտաքին աշխարհի հետ, ապահովվում են ԼՂՀ-ի պետական անվտանգության տեսանկյունից նպաստավոր, բնական սահմաններ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանում սկսում են խորանալ ժողովրդավարական գործընթացներ, որոնց շնորհիվ նորովի է գիտակցվում այդ երկրի արմատական շահն Անդրկովկասում՝ կապվելով սոցիալական ու ազգային առաջադիմության հետ: Միջազգային կազմակերպությունների և տարբեր պետությունների միջնորդական ջանքերի շարքում զգալի է դառնում Ռուսաստանի դերը, որի շնորհիվ 1994 թ. մայիսին հաջողվում է հակամարտող կողմերի միջև կնքել հրադադարի համաձայնագիր: Միջազգային այլևայլ կազմակերպություններ ջանքեր են թափում հրադադարը մշտական խաղաղության վերածելու, կողմերի միջև վերջնական հաշտություն ստեղծելու համար: Այդ ուղղությամբ տարբեր մակարդակի քաղաքական գործընթացները շարունակվում են: Չնայած առայժմ շոշափելի արդյունք չի գրանցվել, բայց ձեռք է բերվել ամենակարևորը՝ թե՛ Ադրբեջանում, թե՛ ԼՂՀ-ում գնալով ավելի ու ավելի են համոզվում, որ հակամարտության կարգավորումը պետք է ուղղորդվի միայն քաղաքական ճանապարհով, բանակցությունների միջոցով, ընդ որում՝ ԼՂՀ-ի անմիջական մասնակցությամբ: Իրենց հերթին միջորդներն էլ համոզվել են, որ ուժային միջամտությամբ հնարավոր չէ լուծել էթնիկական կոնֆլիկտները: Դրանում մեկ անգամ ևս համոզեց 2008թ. օգոստոսին Վրաստանի կողմից Հարավային Օսիան զենքով հպատակեցնելու ապարդյուն փորձը: Հետևանքը եղավ այն, որ սկսվեց Հարավային

Օսիայի և Աբխազիայի անկախության միջազգային ճանաչման գործընթացը:

Բանակցությունների ընթացքում և այլ առիթներով քաղաքական տարբեր ուժեր շարունակում են խոսել Ադրբեջանի՝ այսպես կոչված տարածքային ամբողջականության մասին, մոռանալով, որ ԽՍՀՄ իշխանությունները, երևի թե կարելի է ասել՝ լռելյայն, Ադրբեջանի կազմից հանել են Ղարաբաղը՝ սահմանելով Հատուկ կառավարման կարգ, ենթակա Մոսկվային: Մոռացության է տրվում նաև այն փաստական վիճակը, որ գոյություն ունի, այսինքն՝ 1988 թ. փետրվարից Ղարաբաղը չի ենթարկվում Ադրբեջանին: Տարբեր պետություններ ու միջազգային կազմակերպություններ փաստական ձևով ճանաչում են ԼՂՀ -ն, նրա հետ կապ պահում՝ շրջանցելով Ադրբեջանին: Նույնիսկ ԱՄՆ -ը արդեն քանի տարի ուղիղ գծով հումանիտար օգնություն է ցույց տալիս ԼՂՀ -ին՝ անտեսելով Ադրբեջանը:

Հրադադարի ընձեռած խաղաղ պայմանները նպաստում են քաղաքակիրթ աշխարհի ժողովրդավարության նվաճումների արմատավորմանը ԼՂՀ -ում: ԼՂՀ -ի նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները, որոնց ներկա են լինում դիտորդներ ու լրագրողներ բազմաթիվ երկրներից, համոզում են, որ համաշխարհային հանրության քաղաքակիրթ ընտանիքում ավելացել է մի նոր անուն՝ ԼՂՀ, որն անցել է բազմադարյան ազգային ազատագրական պայքարի և պետականության զարգացման ճանապարհ:

*

* *

Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ ԼՂՀ -ն Արցախ-Ղարաբաղ հայ հասարակական-քաղաքական կյանքի զարգացման օրինաչափ արդյունքն է: Նրա արմատները հասնում են դարերի խորքը: Ներկայիս քաղաքական գործընթացների առումով ուշագրավ է, որ դեռևս 1725 թ. Թուրքիան ծրագրել էր բնաջնջել հայերին, որպեսզի բացի իր ճանապարհը դեպի Բաքու և Հյուսիսային Կովկաս: Ուշագրավ է նաև այն, որ դեռևս 18 -րդ դ. խոշոր տերությունների կողմից (ի դեմս Ռուսաստանի) գիտակցվել է Ղարաբաղի հայկական անկախ պետականություն ստեղծելու անհրաժեշտությունը: Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ Ռուսական կայսրության փլուզումից հետո Հարավային Կովկասում առաջինը թերևս Արցախ-Ղարաբաղում են գործնական քայլեր կատարվել նոր տիպի պետական կազմավորում ստեղծելու ուղղությամբ:

Ղարաբաղը հայաթափ անելու նպատակով Ադրբեջանը 1987 թվականից սկսում է հայերի անթաքույց բռնի տեղահանություն՝ որպես Թուրքիայի հայաջինջ քաղաքականության շարունակություն: Ոչ միայն հայերը, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը մեկ անգամ ևս համոզվում են, որ «թուրքական ռեժիմն ու քրիստոնեական համայնքների ազատությունը ոչ մի կերպ չեն կարող հաշտ ապրել», ինչպես նշել է գերմանացի իրավագետը դեռևս 19 -րդ դ. վերջերին: Նոր փուլ է մտնում հայերի ժողովրդաազատագրական պայքարը, որի արդյունքը լինում է և ԼՂՀ -ի կազմավորումը: Միայն այդ պայմաններում հնարավոր դարձան հրադադարի հաստատումը և խաղաղ բանակցությունների գործընթացը, որը շարունակվում է արդեն տասնհինգերորդ տարին:

Կա հիշելու արժանի ևս մի հանգամանք: Դեռևս 1992 թ. Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնադրամը, որում միավորված էին երկրի խոշորագույն առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունները, առաջ է քաշել ծրագիր՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը քաղաքական ասպարեզից տեղափոխելու տնտեսության ոլորտը: «Խոսքն այն մասին է, որ ստեղծվի ազատ տնտեսական գոտի՝ ներգրավելով արտասահմանյան ներդրումներ: Չէ՞ որ Ղարաբաղը բարեբեր երկրամաս է, որտեղ կան նավթ, ոսկի հազվագյուտ մետաղներ, այլ օգտակար հանածոներ: Բայց ստացվել

է այնպես, որ այդ ամենը մինչև հիմա մնացել է առանց ձեռք տալու»[1]: Առաջ քաշված ծրագիրն այն ժամանակ անհնարին եղավ իրագործել, որովհետև Ադրբեջանը Ղարաբաղի դեմ սանձազերծել էր լայնամասշտաբ պատերազմ: Այժմ, երբ հակամարտության գոտում արդեն երկար տարիներ հրադադարը պահպանվում է, այսպիսի ծրագրերը կարող են նպաստել, որպեսզի հրադադարը վերածի կայուն խաղաղության (նման նախադեպեր հայտնի են աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որոնց դրական արդյունքներն ակնհայտ են):

ԼՂՀ-ում գնալով ավելանում են արտաքին ներդրումները տնտեսության մեջ: Էկոնոմիկայի ակնհայտ զարգացմանը նպաստում են պետականության զարգացումը, ժողովրդավարության ժամանակակից սկզբունքների ու մեթոդների արմատավորումը: Սահմանադրության ընդունումն ու Սահմանադրական դատարանի ստեղծումը, ԼՂՀ-ի Ազգային ժողովի ու նախագահի ընտրությունները, որոնք անցնում են բարձր կազմակերպվածությամբ, օտարերկրյա բազմաթիվ դիտորդների ներկայությամբ, պետականության զարգացման ու ամրապնդման վկայությունն են: Այդ պետականությունը վաղուց արդեն փաստական ձևով ճանաչվում է ամբողջ աշխարհում: Քաղաքական նոր գործընթացները, նորանկախ ու նորաստեղծ պետությունների ճանաչումը վստահություն է ներշնչում, որ մոտ են նաև ԼՂՀ-ի իրավական ճանաչման ժամանակները:

Ամփոփելով մեր խոսքը՝ կուզենայինք հիշեցնել հայտնի իրողությունը, որ Ղարաբաղում ճորտություն չի եղել: Այս հողի վրա շինականը մելիքի (նախարարի, իշխանի) հպատակն է եղել, ոչ ճորտը: Մելիքն իր հպատակին միայն կառավարել է: Եվ դրա շնորհիվ է, որ այդ շինականն անձնուրաց կերպով պաշտպանել է իր հայրենի հողը: Մելիքների զորքն էլ երբևէ

[1] В сильном государстве богатеют бюрократы, газета "Аргументы и факты", Москва, 1992, № 18, май, с.2.

վարձու չի եղել: Մելիքի զորքը համալրվել է իր հպատակներից, յուրաքանչյուր տուն կամավոր մի զինվոր է տվել: Ահա սրանք են այս հողի վրա հայ պետականության հարատևման գործոնները:

*
* *

Ինչպես՝ քարե բազմադարյան հզոր կամար, որ թռիչք է կատարում անդնդախոր կիրճի վրայով, շաղկապում լեռներն ու դյուրացնում հողի տիրոջ ընթացքը, ԼՂՀ-ն, որի արմատները հասնում են դարերի խորքը, միավորում է լեռնաշխարհը, ապահովում կյանքի բնականոն ու անվտանգ հարատևումը երկարամասում և հանդիսանում հուսալի երաշխիք Արցախ-Ղարաբաղի գերյալ տարածքների ազատագրման համար...

Կիմ Հարությունի Ղահրամանյան
Ալվարդ Սարուխանի Ղազիյան
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն.
Պետականության ակունքները

Ким Арутюнович Каграманян
Алвард Саруханович Газиян
НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА:
ИСТОКИ ГОСУДАРСТВЕННОСТИ

Համակարգչային աշխատանքները՝ Գ. Ղազիյանի

Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատանը